

# ՄԱՐԶԻԿ

հսլս

مارزقك

مجلة رياضية شهرية  
تصدرها جمعية الهومنتمن بيروت

**marzig**  
SPORTS MAGAZINE

հը ՏԱՐԻ, 2009, ԹԻԻ 1 (319) VOL. XXVIII N° 1      السنة الثامنة والعشرون - العدد الأول



Հ.Մ.Ը.Մ.-ի 90 եւ Քուլտի Մեկուսի Մասնաժիւղի 25 Ամեակներու Տօնակատարումը

Անցեալէն՝ Ապագայ, Հ.Մ.Ը.Մ.-ն է Ներկայ



Բուժից





## ՄՈՍԿՈՒԱՅԻ ՄԱՍՆԱԳԻՂԻ ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹԵԱՄԲ՝ Հ.Մ.Ը.Մ.Ի ԾԱՆՕԹԱՑՄԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ ԵՒ ԱՐՑԱԽԵԱՆ ԱԶԱՏԱՄԱՐՏԻ ՖԻԼՄԻ ՑՈՒՑԱԴՐՈՒԹԻՒՆ

*Թղթակից  
ՄՈՍԿՈՒԱ*



**21** Դեկտեմբեր 2008ին, Հ.Մ.Ը.Մ.ի Մոսկուայի նորաստեղծ մասնաճիղը կատարեց իր առաջին ձեռնարկը՝ Իզմայիլովոյի իր կեդրոնին մեջ: Ձեռնարկը ընդգրկեց Հ.Մ.Ը.Մ.ի պատմության ներկայացում եւ Արցախեան ազատամարտի նուիրում՝ «Չըկրակուած փամփուշտներ» ֆիլմի ցուցադրութիւն:

Հայաստանի եւ Հ.Մ.Ը.Մ.ի քայլերգներէն ետք, ձեռնարկին բացման խօսքը արտասանեց մասնաճիղի ատենապետ եղբ. Փիէր Օհաննէս: Ան ողջունեց բոլորը եւ հրաւիրեց զիրենք դիտելու ներկայացում մը Հ.Մ.Ը.Մ.ի մասին: Ներկայացումը պատրաստուած էր մասնաճիղի անդամներուն կողմէ եւ կը նպատակադրէր երիտասարդութեան ծանօթացնել հայ մարմնակրթական եզակի այս միութիւնը:

Ապա, Արցախեան ազատամարտին նուիրում Ֆիլմի ցուցադրութեամբ ներկաները յիշեցին Հ.Մ.Ը.Մ.ի

Ը.Մ.ական նահատակ եղբայրներ Վարդան Բախշեանն ու Վիգէն Ջաքարեանը, որոնք իրենց մատաղ կեանքերը զոհաբերեցին հայրենիքի ազատութեան սիրոյն:

Ձեռնարկը անցաւ միութեան կողմէ մթնոլորտով: Ներկայ մեծ թիւով երիտասարդներ, խանդավառուած միութեան նպատակով եւ պատմութեամբ, ձեռնարկէն ետք անդամագրուեցան Հ.Մ.Ը.Մ.ին:



### ՑԱՒԱԿՑԱԳԻՐ

Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի վարչութիւնը ցաւով կը գուժէ իր վաստակաւոր խմբապետներէն եղբ. Հրայր Տէր Գրիգորեանի մահը, որ պատահեցաւ 23 Յունուար 2009ին, Արեւմտեան Միացեալ Նահանգներու մէջ:

Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի վարչութիւնը իր խոր ցաւակցութիւնը կը յայտնէ հանգուցեալ եղբոր տիկնոջ՝ քոյր Արմինէին, զաւակներուն եւ ընտանեկան պարագաներուն, ինչպէս նաեւ Հ.Մ.Ը.Մ.ի ողջ ընտանիքին:

Հ.Մ.Ը.Մ.-ՖՐԱՆՍԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Փարիզ, 10 Փետրուար 2009





# ԹԻՒԻՆ ՆԻՒԹԵՐՂ

**MARZIG** SPORTS MAGAZIN EDITED MONTHLY BY HOMENETMEN  
**مارزیک** مجله رياضية شهرية تصدرها جمعية الهومنتمن الرياضي



Մարզական ամսաթերթ  
 Հրատարակություն՝ Հ.Մ.Ը.Մ.ի  
 ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ  
 ԻԸ. ՏԱՐԻ, 2009, ԹԻՒ 1 (319)



## Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ԿԵԱՆՔ

- Խմբագրական 2
- Ակնարկ 3
- Մեր Տեսակցությունները 4
- Պատգամ 6
- Խոստմնալից Դեմքեր 9
- Պատմություն 10
- Մասնաձիւղէ Մասնաձիւղ 13
- Մեր Կորուստները 36



## ԲԱԺԻՆՆԵՐ

- Միջազգային 12
- Մանկապատանեկան 38
- Տարբեր Հայեացքով 40



ԽՄԲԱԳԻՐ  
 Վիզեն Աւագեան  
 ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄ  
 Սեդա Պէշեան, Սեւան Նազարեան  
 «ՄԱՐԶԻԿ»Ի ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ  
 Պատրիկ Կիւլպենկեան  
 Աբօ Մոսիկեան  
 Գօգօ Սկրտիչեան  
 Վահան Համամճեան  
 Տիրան Շահինեան  
 Սալբի ճէճէեան  
 Վահէ Թանաշեան

ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒՆԻՆ  
 Գրիգորիս Պողարեան, Ժան  
 Պէպէճեան, Րաֆֆի Սիւլահեան,  
 Ներսէս Արք. Բախտիկեան\*, Գէորգ  
 Թորոյեան, Սալբի Լատոյեան  
 եւ շրջաններու թղթակիցներ:  
 Էջադրում - Չարեհ Չէօրէքճեան  
 Գրաչարութիւն - Վերա Բարսեղեան  
 Colour Separation - Photogravure Paklayan  
 Կողքի Ձեւաւորում Տպագրութիւն



ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՍՑԷ  
 Պուրճ Համուտ, ճինիչեանի Թաղ  
 «Սեւան» Շէնք, Գ. Յարկ  
 Հեռ: 01/248043, Fax: 01/260117  
 E-mail: marzig@homenetmen.org  
 P.O. Box: 80486 B. Hammoud, Lebanon

## ՑՐԻՈՒՄ

Լիբանանի մէջ թերթին  
 հատավաճառի սակն է 3000 Լ.ո.:  
 Տարեկան բաժանորդագրութեան սակ  
 ճշդուած է 35000 Լ.ո.:  
 Լիբանանէն դուրս թերթին  
 բաժանորդագրութիւնը  
 կը կատարեն Հ.Մ.Ը.Մ.ի Մեկուսի  
 եւ Շրջանային Վարչութիւնները:  
 Թերթը ուղղակի Լիբանանէն  
 կը ստացուի անձնական  
 բաժանորդագրութեամբ  
 (Տարեկան սակ՝ Միջին Արեւելեան  
 եւ Եւրոպական երկիրներ \$50,  
 Ամերիկա եւ Աւստրալիա՝ \$55):





Խ  
Ն  
Բ  
Ա  
Գ  
Ր  
Ա  
Կ  
Ն

# ԲՈՒՒՆ ՏԱՐՑԸ

**Ք**աղքենիացումը նոր երեւոյթ չէ: Միայն հայութեան յատուկ երեւոյթ ալ չէ: Ամէն երկրի մէջ, որոշ պայմաններու բերումով եւ նիւթական բարօրութեան հետեւանքով կը ըստեղծուի դասակարգ մը, որուն անդամները կը վարժուին հանգստաւէտ կեանքի: Լաւ ապրելու, լաւ բաներ վայելելու պահանջքը կը դառնայ կեանքի նպատակ:

Երբ քաղքենիացած դասակարգը հայրենի հողին վրայ կ'ապրի, որոշ չափով մը ան կը պահպանէ իր ազգային դիմագիծը եւ ուզէ թէ չուզէ կապուած կը մնայ ազգային արժէքներու, որովհետեւ ան իր հարստութիւնը ձեռք կը բերէ հայրենի երկրի աղբիւրներէն: Բայց երբ դիրք ու բարեկեցութիւն ստեղծող այդ դասակարգը կ'ապրի օտար հողի վրայ, շատ շուտով կը բռնէ այլասերման ճամբան:

Քաղքենիացումը պարզ երեւոյթէ մը աւելին է: Ան մտայնութիւն է եւ հոգեբանութիւն: Քաղքենիացած ընտանիքներ տրամադիր են ազգային ամէն արժէք զոհելու, իրենց սեփական հանգիստն ու հաճոյասէր կեանքի առաւելութիւնները չկորսնցնելու համար: Ամէնէն շուտ եւ ամէնէն առաջ մայրենի լեզուն մոռնալով, իրենց ապրած երկրի լեզուն եւ բարբերը որդեգրող դասակարգն է ան: Պայքարի եւ դիմադրութեան ոչ մէկ տրամադրութիւն կը գտնենք իր մօտ: Լաւագոյն պարագային քաղքենի մարդիկ «իմաստուն» խորհուրդներ կը բաշխեն ծախ ու աջ եւ երբեմն ալ «ազնիւ» բարերարութեամբ փոքր ծառայութիւններ կը մատուցեն: Այդքա՛ն:

Քաղքենիացումը վտանգաւոր համեմատութիւններու կը հասնի, երբ անոր կը միանայ ընթացիկ այլ երեւոյթ մը՝ ցուցամոլութիւնը, զոր սովորութիւն է կոչել սնոպիզմ: Քաղքենիացում եւ սնոպիզմ միասին կ'ընթանան, իբրեւ մէկը միւսին պատճառ ու հետեւանք:

Քաղքենիացման եւ սնոպիզմի երեւոյթները կը ներկայանան զանազան ձեւերով, բայց խորքին մէջ անոնք բոլորն ալ կը բնորոշուին նոյն ախտանշանով.- եսամոլութիւն եւ օտարասիրութիւն: Վազք մը անձնական շահերու ետեւէն եւ կոյր ընդօրինակութիւն օտարի բարբերուն:

Իսկ ի՞նչպէս պայքարիլ այս երեւոյթներուն դէմ:

Կարելի՞ է արգելք դնել մարդոց հարստացման դէմ: Ո՛չ, անշուշտ: Ընդհակառակն, նիւթական հարստութիւնը ազգի մը մէջ նոյնքան դրական ուժ է, որքան մտաւոր եւ մշակութային զօրութիւնը: Պայմանով որ սակայն նիւթական այդ ուժէն օգտուին հաւաքական կեանքը պահող կառոյցներն ու միութիւնները եւս: Ի՞նչպէս ընել ուրեմն, որ մեր մէջ հարստութիւն դիզող դասակարգը չհեռանայ իր ժողովուրդէն, ապրի ազգային մտահոգութիւններով: Ահա բո՛ւն հարցը:

Քաղքենիացման ընթացքը գրեթէ անխուսափելի է: Անոր դէմ պայքարի միակ միջոցը ազգային ոգիի պահպանումն է ընտանիքներէ ներս: Եւ այս «հրաշքը» կարելի կը դառնայ զօրացրնելով ու բազմացնելով մեր ազգային ինքնագիտակցութիւնը կազմող տարրերը.- հայ դպրոց, հայ միութիւն, հայ եկեղեցի, հայ մամուլ, հայկական բարբեր, հայկական արժէքներ եւ այլն:

Այսպէս, մէկ կողմէ հայութեան երակներէն արիւն պիտի հոսի, միւս կողմէ նոր արիւն պիտի ներարկուի անոր: Կարելորը կացութեան չյանձնուելու վճռականութիւնն է: Պայքարողներու կամքը եւ զոհաբերութեան ոգին: Յակառակ բոլոր տխուր երեւոյթներուն, պայքարը պիտի շարունակուի, տեւաբար բարելաւելով անոր միջոցները, օգտուելով մեր ժողովուրդի կենսունակութեան աղբիւրներէն: Օգտուելով անցեալի եւ ներկայի մեր հարուստ փորձառութիւններէն:



# ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՎԵՐԱԴԱՍԱԲՈՐՈՒՄ

Գրիգորիս Պողարեան  
ՊԵՅՐՈՒԹ

«**Ժ**ամանակները կը փոխուին, նոյնպէս եւ՝ առաջնահերթութիւնները» ասացուածքը, վստահաբար, այնքան իրաւացի է՝ որքան «ժամանակները կը փոխուին» ճշմարտութիւնը: Իսկապէս, իմաստութիւն պիտի չըլլար պնդել, թէ յարափոփոխ այսօրուան աշխարհին մէջ, առաջնահերթութիւնները, ըլլան անոնք անհատական, միութենական, ազգային թէ միջազգային, անփոփոխ կրնան մնալ:

Ժամանակները փոխուած են, հետեւաբար ճիշդ ժամանակն է, որ Հ.Մ.Ը.Մ.էն ներս վերանայինք մեր անցեալի իրագործումները, իրապաշտօրէն արժեւորենք ներկայ վիճակը եւ ըստ այնմ ծրագրենք ապագան, ճշդելով մեր առաջնահերթութիւնները:

Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան շրջանին, Ա. Աշխարհամարտի յաջորդող օրերուն, առաջնահերթութիւնները կ'ընդգրկէին օժանդակութեանց մատակարարում կարիքաւորներու եւ որբերու, սկառտական առաջին խումբերու կազմակերպութիւն եւ մարզական աշխատանքներու վերահսկողութիւն:

Աւելի ուշ, սփիւռքեան զանազան գաղութներու հաստատումով, հոն ուր արհաւիրքէն եւ Յեղասպանութենէն ճողոպրած հայեր հաստատուեցան, սկառտութիւնն ու մարզական խաղերու կիրարկումը հանդիսացաւ Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղերու գործունէութեան առանցքը: Տասնամեակներու վրայ երկարող ժամանակաշրջանի մը ընթացքին, Հ.Մ.Ը.Մ.ի աշխատանքները կեդրոնացան սկառտութեան, աթլետիզմի թէ մարզական ոլորտներէ ներս գերազանց արդիւնքներու ձեռքբերումի վրայ: Կը թուի թէ այդ ժամանակամիջոցին մարզական գետնի վրայ փայլուն արդիւնքներու ձեռքբերումը միջոց մըն էր ինքնագօտեպնդման եւ լաւագոյն ձեւերէն մէկը փաստելու, թէ այս կամ այն երկրի հայ քաղաքացին, թէկուզ տեղւոյն լեզուին մասնակի տիրապետող, լիիրաւ քաղաքացի է եւ գերազանց մարզիկ, բառին լայն առումով: Առաւել, մարզական յաջողութիւններ ձեռք կը բերուէին քրտինքով, անձնագոհութեամբ, յարատեւ եւ հետեւողական աշխատանքով եւ յարաբերաբար նիւթական համեստ միջոցներով:

Այսօր, մարզական բացառիկ նուաճումներ, մանաւանդ ժողովրդական մարզաձեւերու մէջ, ինչպիսին են ֆութպոլն ու պասքեթպոլը, հազուադէպ դարձած են: Սփիւռքեան, ի մասնաւորի միջին արեւելեան գաղութներու նօսրացումը,

դէպի Արեւմուտք տեղաշարժի պատճառով, ունեցած է իր բացասական ազդեցութիւնը, անկասկած: Ս ա կ ա յ ն , գ լ ի ա լ ո ղ պատճառը երբեմնի մարզական փառքերուն ենթադրաբար անվերադարձ բացակայութեան՝ արհեստավարժութեան մուտքն է մարզական աշխարհէն ներս: Արհեստավարժութիւն, որ իր հետ կը բերէ սուր մրցակցութիւն՝ առաւելաբար ոչ մարզական, այլ նիւթական կարողականութեան իմաստով: Եթէ անցեալին նիւթապէս համեստ հայր միութենական եւ ազգային աննկուն կամքով զինուած կրնար յաղթանակներ արձանագրել, այսօր, նիւթականով անհամեմատ կարելիութիւններով օժտուած տեղական խումբերու դէմ մրցելու եւ յաղթանակներ արձանագրելու կարելիութիւնները, արհեստավարժութիւն կիրարկող խաղաձեւերու մէջ, գրեթէ անկարելի դարձած է:

Ստեղծուած կացութեան դիմաց դժբախտաբար կան ազգայիններ, որոնք միութենական կեանքէն ոչ շատ տեղեակ՝ Հ.Մ.Ը.Մ.ը եւ միութենական մարզիկը կը նկատեն թերացած իր պարտաւորութեանց մէջ: «Հիասթափուած» նման ազգայիններ կունակ կը դարձնեն Հ.Մ.Ը.Մ.ին եւ անգիտակցաբար աւելի կը դժուարացնեն անոր դերակատարութիւնն ու հաւանական ետդարձը դէպի լուսարձակներ: Մինչդեռ իրաւ Հ.Մ.Ը.Մ.ականը պարտի պարզապէս վերադասաւորել առաջնահերթութիւնները: Պարտի գիտակցիլ, թէ յաղթանակներ կերտելը միշտ ալ ցանկալի է, որպէս միջոց ինքնագոհութեան, բայց ոչ նպատակ՝ գոյութեան: Գոյութեան նպատակը ազգապահպանումը, ազգակերտումը եւ հայրենակերտումն է: Իսկ նպատակի իրագործումի ճամբաները կրնան անցնիլ մարզական դաշտերու, սկառտական բանակավայրերու թէ հանրային-մշակութային ձեռնարկներու ընդմէջէն: Ծամբաները միշտ ալ հարթ չեն եղած եւ չեն ալ կրնար ըլլալ, սակայն երթը կայ ու կը մնայ աներբ եւ բացարձակ առաջնահերթութիւն:





# ՄԿԱՌԻՏԱԿԱՆ ՎԿԱՅԵԱԿ ԵՒ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԿԱՐԳԵՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՏԱՐԻՆԵՐՈՒԹՅԱՆ ԵՐԱԶՁ ՄԸ ՊԻՏԻ ԻՐԱԿԱՆԱՑՆԷ



«ՄԱՐԶԻԿ»ԻՆ Կ'ԸՍԵ Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄԵՐԲ. ԿԱՐՊԻՍ ԳԱՊԱՍԱԳԱԼԵԱՆ ՍԻՈՒԹԵԱՆ ՄԿԱՌԻՏԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐՈՒՄՆ ՄԱՍԻՆ ԽՕՍԵԼՈՎ

**Այս տարի թեև համա-Հ.Մ.Ը.Մ.ական մարզախաղերու տարի է, սակայն կ'իմանանք, թե կարելուր նախաձեռնութիւններ կան նաեւ սկաուտական մարզին մէջ: Կրնա՞ք ընդհանուր պատկեր մը տալ Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտութեան ներկայ վիճակին եւ յառաջիկայ օրերուն գործադրուելիք ծրագիրներուն մասին:**

- Նախ ըսենք, որ սկաուտական կարգերը կ'ընդգրկեն այլազան գիտելիքներ՝ ազգային, կրօնական, միութենական, սկաուտական, մարզական, քաղաքացիական եւ հոգեբանական: Նիւթեր, որոնք տարիքի բերմամբ կը զարգանան՝ սկաուտներու մտային եւ ֆիզիքական կարողութեանց համաձայն եւ հանգրուանային դրութեամբ:

Տրուած ըլլալով որ Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտութիւնը համա-Հ.Մ.Ը.Մ.ական կառոյց ունի, հետեւաբար, աշխարհի տարածքին, Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտը ուր ուր ալ ըլլայ նոյն գիտելիքը պէտք է ստանայ, թերեւս տարբեր ոճով: Մենք կ'ուզենք որ բոլորը ամենուրեք նոյն մակարդակը ունենան:

Այս իմաստով, 1999էն ի վեր սկաուտական շարքերու տրամադրութեան տակ դրուած են գայլիկական եւ արի-արեւնուշական կարգերու գործնական եօթը գիրքեր: Կը մնան երեք պարմանուհիներու բաժանմունքին յատուկ գիտելիքներու գիրքերը:

Անցեալին, սկաուտական շարքերը կը գործածէին բոլորիս ծանօթ եղբ. Նշան Թիւսիւզեանի նախաձեռնութեամբ կազմուող թափկի եւ նորընծայի գիրքերը, ուր սկաուտական կարգերու շարքին յիշուած էին նաեւ Վկայեալ եւ Արարատեան կարգերը, որոնք երկար ժամանակ մեզի համար մնացած էին անձանօթ:

1996ին, համա-Հ.Մ.Ը.Մ.ական խմբապետական Գ. համագումարը (Աւստրալիա) մշակած եւ պատրաստած էր վերոյիշեալ կարգերու թղթածրարները, սակայն հետագային կարելի եղած չէր զանոնք իրագործել:

Յիշենք, որ 1984-1985, Լիբանանի շրջանը յատուկ թղթածրարով եւ լայնածաւալ նիւթերով, օրուան Կեդրոնական Վար-

չութեան գիտակցութեամբ, առաջին նախաձեռնողը եղաւ Վկայեալ կարգի: Հետագային, Արեւմտեան Միացեալ Նահանգներու շրջանը եւս կազմակերպեց Վկայեալ կարգ:

2007ին, Հ.Մ.Ը.Մ.ի Պատգամատրական 9րդ ընդհանուր ժողովը պարտք դրաւ Կեդրոնական Վարչութեան վրայ բոլոր շրջաններուն համար իրագործել Վկայեալ կարգը եւ զլուխ հանել խմբապետներու տարիներու երազը՝ Արարատեան կարգը:

Հետեւաբար, Կեդրոնական Վարչութիւնը մշակեց իր քառամեայ ծրագիրը, որուն շարքին առաջինը՝ 2008ի ամրան յաջողցուց համա-Հ.Մ.Ը.Մ.ական խմբապետական Ե. համագումարը, ուր նաեւ վերջնականապէս ձեւակերպուեցան Վկայեալ եւ Արարատեան կարգերու գիտելիքները:

Համագումարէն անմիջապէս ետք Կեդրոնական Վարչութիւնը իր Բ. լիագումարով վաւերացուց անոնց թղթածրարները: Արդ, կը մնայ անոնց գործնականացումը 2009ին եւ 2010ին:

### **Ի՞նչ նպատակ կ'առաջադրեն այս երկու կարգերը:**

- Վկայեալ կարգի գիտելիքներու բովանդակութիւնը կ'առաջադրէ պատրաստել փորձառու խմբապետներ, որոնք բարարար պաշար ունենալով ի վիճակի ըլլան ստանձնելու պատասխանատուութիւններ իրենց մարզերուն եւ բաժանմունքներուն մէջ եւ կարողանան ձեռնհասօրէն վարել իրենց վստահուած պաշտօնները: Նախապայման է, որ թեկնածուն ունենայ Ա. կարգ եւ ամբողջացուցած ըլլայ 16 տարիքը:

Իսկ Արարատեան կարգը կ'առաջադրէ, որ թեկնածուն զանազան մարզերու մէջ լայն պաշար ունենալով, գիտնայ ձեռնհասօրէն ղեկավարել խմբապետներ եւ լայնախոհութեամբ ու հեռատեսութեամբ ցուցմունքներ տայ անոնց աշխատանքներուն, կազմակերպէ դպրոց-բանակումներ եւ պատրաստական ըլլայ ստանձնելու վարչական պատասխանատուութիւններ միութենական թէ ազգային կառոյցներու մէջ: Նախապայման է, որ թեկնածուն ունենայ Վկայեալ կարգ եւ խմբապետի աստիճան, ըլլայ գործօն, ստանձնած ըլ-



լայ մասնաճիւղի կամ շրջանի ընդհանուր բանակումի պատասխանատուութիւնը եւ լաւատեղեակ ըլլայ միութեան եւ սկստական ընդհանուր կանոնագրութեան:

**Ի՞նչպէս եւ ե՞րբ տեղի պիտի ունենան այս կարգերը:**

- Երկու կարգերն ալ կ'ենթադրեն որ տեղի ունենան երեք հանգրուանով՝ տեսական, գործնական եւ փորձառական: Տեսական հանգրուանին, շրջանի սկստական պատասխանատու մարմնին հսկողութեամբ, թեկնածուին կը թելադրուի մեր կողմէ ճշդուած նիւթերը ինքնաշխատութեան սերտել եւ ուսումնասիրել, ապա այդ գիտելիքները փոխանցել կամ ուսուցանել իր խումբի անդամներուն: Գործնական հանգրուանին թեկնածուն կը մասնակցի հնգօրեայ գործնական բանակումի, ուր դաստիարակչական զանազան միջոցներով, մասնագէտներէ կը ստանայ օգտաշատ նիւթեր եւ գիտելիքներ: Փորձառական հանգրուանին, շուրջ երեք ամսուան ընթացքին, ենթակային առիթ կը տրուի, որ իր ստացած բոլոր գիտելիքները գործնականօրէն կիրարկէ սկստական աշխատանքներու ընթացքին: Երբ ան արդարացնէ իրմէ ակնկալուածը, շրջանի սկստական պատասխանատու մարմնի հաստատագրով ան կը ստանայ համապատասխան վկայական եւ պէճ:

Տրուած ըլլալով որ շրջաններու մէջ, ի բացառեալ Լիբանանի եւ Արեւմտեան Միացեալ Նահանգներու, որոնք պարագայբար կազմակերպած են Վկայեալ կարգ, դժուարութիւններ կան այս կարգի դասընթացքը կազմակերպելու՝ փորձառու եւ մասնագէտ բաւարար մարդու չգոյութեան պատճառով, բոլորին փափաքն ու պահանջը եղաւ, որ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը այս հանգրուանին ինք կազմակերպէ Վկայեալ կարգը: Արարատեան կարգը արդէն իրեն կը վերաբերի:

Հետեւաբար, ճիշդ եւ արդար ըլլալու համար նախընտրեցինք, որ առայժմ Վկայեալ կարգի թեկնածու նկատուին միայն խմբաւորումներու (գայլիկ, արծուիկ, արի, արենոյշ եւ երէց) գլխաւոր պատասխանատուները եւ անոնցմէ բարձր՝ միաւորի, մասնաճիւղի եւ շրջանային խմբապետ-խմբապետուհիները:

Ժամանակի եւ մարդու խնայողութեան համար որոշեցինք, որ գործնական բանակումները տեղի ունենան երեք ցամաքամասերու մէջ: Շրջաններու առաջարկով անոնց բաժանումը կատարուեցաւ հետեւեալ ձեւով.- Միջին Արեւելք, Եւրոպա եւ Հիւսիսային Ամերիկա:

Վկայեալ կարգի տեսական հանգրուանը սկիզբ առաւ Յունուար 2009ին: Գործնական բանակումը տեղի կ'ունենայ ամրան՝ Յուլիս-Օգոստոս ամիսներուն, իսկ փորձառական հանգրուանը կ'աւարտի Դեկտեմբերին:

Արարատեան կարգը, որուն պիտի մասնակցին միայն շրջաններու եւ մեկուսի շրջաններու գլխաւոր խմբապետ-խմբապետուհիները, տեսական հանգրուանը սկիզբ պիտի առնէ Յունուար 2010ին: Գործնական բանակումը տեղի պիտի ունենայ համա-Հ.Մ.Ը.Մ.ական Զրդ ընդհանուր բանակումի նախօրեակին՝ 2010ի ամրան, իսկ փորձառական հանգրուանը՝ ընդհանուր բանակումի տեւողութեան: Հոն թեկնածուներուն պիտի վստահուին զանազան պաշտօններ: Այլա-

զան աշխատանքներու գործօն մասնակցութեամբ եւ յաւելեալ փորձառութիւն ձեռք ձգելով, ընդհանուր բանակումի աւարտին անոնք պիտի ստանան համապատասխան վկայական եւ պէճ:

**Ի՞նչ կ'ակնկալուի խմբապետներու վերաորակաւորման դասընթացքին:**

- Համա-Հ.Մ.Ը.Մ.ական խմբապետական Ե. համագումարը իր օրահարցերուն վրայ ունէր նաեւ մերօրեայ գործօն խմբապետներու ընդհանուր իրավիճակը, անոնց դժուարութիւններն ու պահանջները:

Բոլորս ալ քաջ գիտենք, որ վերջին տասնամեակներուն, գիտութեան բացառիկ զարգացումով եւ արագընթաց ու մշտատեւ յառաջխաղացքով ու յառաջդիմութեամբ, մասնագէտ բժիշկէն եւ ուսուցիչէն սկսեալ, մինչեւ ինքնաշարժ նորոգողը, բոլոր մարգերու մէջ, բոլորն ալ այսօր յաջորդական քայլերով պարտաւոր են հետեւելու օրուան վերջին նորութիւններուն, որուն համար պարբերաբար կը մասնակցին, «այսպէս ասաց», վերաորակաւորման դասընթացքներու:

Հետեւաբար, մեր խմբապետներն ալ իրենց կարգին այժմու կարիքներէն թելադրուած՝ պահանջը ունին վերաորակաւորման:

Պէտք է ընդունինք, որ մեր խմբապետները ժամանակի բերմամբ, անձնական հետաքրքրութեամբ ու փորձառութեամբ, երբեմն դպրոց-բանակումներու հետեւելով, ստանձնած են վոհմակներ, խումբեր, փաղանգներ ու դարձած են խմբապետներ, ապա անոնցմէ ոմանք ջանասիրութեամբ ու զոհողութեամբ յանձն առած են յաւելեալ պատասխանատուութիւններ:

Շրջանները ընդհանրապէս, բացառութիւնները յարգելի են, հետեւողական դրութեամբ մշակուած ծրագիրներ չեն ունեցած օրուան պահանջներուն առընթեր փոխանցելու զանազան գիտելիքներ՝ նիւթերու պատշաճեցման եւ խմբապետներու մակարդակի բարելաւման համար:

Արդ, անխուսափելի նկատուեցաւ միաժամանակ կազմակերպել խմբապետներու վերաորակաւորման դասընթացք մը, որուն նպատակը պիտի ըլլայ գործօն խմբապետներու գիտելիքներու պաշարը հարստացնել բոլոր մարգերու մէջ եւ ընդարձակելով անոնց գործունէութեան հորիզոնը՝ զանոնք դարձնել աւելի ինքնավստահ ու ձեռնհաս, լաւագոյն ձեւով վարելու իրենց վստահուած պաշտօնը:

**Ի՞նչու միացուցած էք Վկայեալ կարգի եւ խմբապետներու վերաորակաւորման դասընթացքը:**

- Ի վերջոյ երկու ծրագիրները զիրար կ'ամբողջացնեն: Սկսելու համար, հաւանաբար քիչ մը ծանր պիտի ըլլայ բոլորին համար: Փոխանցուելիք նիւթերը բաւականին ընդարձակ են, եւ կը վստահիմ մեր խմբապետներու կամքին ու քաջութեան:

Մենք արդէն 2008 Հոկտեմբերին բոլոր շրջաններուն փոխանցեցինք դաստիարակչական վերոյիշեալ երեք ծրագիրներուն թղթածրարները, որպէսզի բոլորը լայն ժամանակ ունենան եւ լաւապէս պատրաստուին աշխատանքներուն:

(Շար.ը՝ էջ 40)



# Հ.Մ.Ը.Մ. ԻՒՐԱՅԱՏՈՒԿ ՆԿԱՐԱԳՐԻ ԿԵՐՏՈՒՄ, Հ.Մ.Ը.Մ. ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ ԱՆՍՊԱՌ ԱՂԲԻՐ

(ԵՂԲ. ԺԱՆ ՊԷՊԷՃԵԱՆԻ ԽՕՍԲԸ, ԱՐՏԱՍԱՆՈՒԱԾ՝ Հ.Մ.Ը.Մ.Ի 90ԱՄԵԱԿԻՆ ԵՒ ՔՈՒԷՅԹԻ ՄԱՄՆԱՃԻԻՂԻ 25ԱՄԵԱԿԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ԶԵՌՆԱՐԿԻՆ)

**Մ**արդոց եւ ազգերու պատմութիւնը յարատեւ պայքարի պատմութիւն է: Ան գոյատեւման պայքարի պատմութիւն է, ուր կը շարունակէ մնալ ուժեղը, կազմակերպուածը եւ սերունդներ պատրաստող հաւաքականութիւնը:

Ճանչցուած իրողութիւն է, որ ազգերու կամ պետութիւններու ապագան կախում ունի իրենց երիտասարդութեան գոյավիճակէն:

Երկիրներ, ազգեր եւ պետութիւններ չեն կրնար յառաջդիմել ու զարգանալ միայն անցեալի իրենց փառքի պատմութիւնը երգելով կամ ապագայի նկատմամբ երազներ հիւսելով: Պէտք է ծրագրել, կազմակերպել եւ կերտել ապագայի սերունդները, սխրագործութիւններու եւ նուաճումներու ջանքերէն փոխանցելու համար: Ահա թէ ինչու յառաջդիմած երկիրներ մեծ դրամագլուխ, մարդուժ եւ գիտութիւն կը տրամադրեն իրենց երիտասարդութեան առողջ պատրաստութեան համար, սկսեալ դպրոցներէն, համալսարաններէն, մշակութային եւ մարզական կեդրոններէն:

Քաղաքակիրթ պետութիւններ շատ լաւ կը գիտակցին, որ ֆիզիքապէս ապառուղջ, հոգեպէս ընկճուած ու բարոյապէս սայթաքած եւ անտարբեր սերունդներ կրնան վատնել եւ քանդել դարերու ընթացքին կերտուած ու ձեռք բերուած քաղաքակրթութիւնը եւ ազգային ու մշակութային հարստութիւնները, ինչ որ կործանիչ հետեւանքներ կրնան ունենալ տուեալ ազգի մը համար:

Ինչ կարելի է ըսել 1918ի հայ երիտասարդութեան մասին, որուն ազգն ու հայրենիքը ճաշակած են պատմութեան դառնագոյն աղէտները: Հայրենիքը ամայացած է ու գրաւուած: Ժողովուրդին կէսէն աւելին նահատակուած է: Ողջ մնացած երեխաներն ու պատանիները կա՛մ լման որբեր են կամ միակողմ որբեր: Պատմութեան ամենադաժան, ամենամռայլ դարաշրջանը, զոր կրնայ որեւէ երիտասարդութիւն երեւակայել իր առողջ ու բնականոն զարգացման համար: Տնտեսապէս քայքայուած, աննկարագրելի թշուառութիւն եւ անբեւակայելի զրկանքներով շրջապատուած ազգ մը: Ինչպէ՞ս կը հաղթեն հաւաքական արժանապատուութիւնը:

Ահաւասիկ այս էր վիճակը հայ երիտասարդութեան, 1915ի Յեղասպանութենէն ետք, հիւժած, անպատսպար, յուսահատ եւ ընկճուած սերունդներ, որոնց համար պայծառ ապագայի մասին երազելն անգամ երազային կը թուէր: Կատարեալ



անորոշութիւն ապագայի նկատմամբ:

Հոգեկան քանդուածութեան զանգուածային այս մթնոլորտէն պիտի ծնէր թանկագին եւ սքանչելի խմբակ մը, բաղկացած մարմնակրթութեան ուսուցիչէ՛ Շաւարշ Քրիսեան, դաստիարակէ եւ դպրոցի տնօրէնէ՛ Յովհաննէս Հինդլեան եւ ազգային մարզիկէ՛ Գրիգոր Յակոբեան, որոնք 1918ին պիտի որոշէին հիմնել Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնը՝ Պոլսոյ մէջ:

- Ի՛նչ յանդգնութիւն էր հոգեպէս քանդուած սերունդներէն միութիւն հիմնելը:

- Որքա՛ն խոր հաւատք ունեցած էր այդ սերունդը հայ ժողովուրդի պատմութեան, մշակութային հարստութեան ու պայծառ ապագային նկատմամբ, այն պահուն, երբ պայծառատեսութիւնը ցնորական մտքի մարզանք կը նկատուէր:

- Ինչպիսի՛ աննկուն ու անսասան կամքի տէր մարդիկ ըլլալու էին անոնք, որ նման յանձնառութեան տակ մտած էին: Իրականութեան մէջ, Հ.Մ.Ը.Մ.ի ծնունդը ընդվզումի մեծ հակազդեցութիւն էր դահիճին ու ոճրագործին դէմ, ուր հիմ-



նադիրները կը պատգամէին, որ իրենք վերստին պիտի ցանեն հայութեան պտղատու հունտերը, մեր հարուստ պատմութեան եւ մշակոյթի պարարտ հողին վրայ, անոնք վերստին պիտի ծլարձակին ու ծաղկին, սերունդէ սերունդ պիտի հօրանան՝ մինչեւ ի վիճակի ըլլան մեր արդար իրաւունքները պահանջելու ցեղասպան թուրքէն:

Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութիւնը ձեւով մը ազգային բողոք էր քաղաքակիրթ աշխարհին, որ այնքան անտարբերութեամբ եւ սառնասրտութեամբ դիտած էր հոյակապ ազգի եւ մշակոյթի մը ողջակիցումը:

Վերջապէս, Հ.Մ.Ը.Մ.ի ծագման մէջ պէտք էր փնտռել հայութեան հակազդեցութիւնն ու պոռթկումը՝ ճակատագրի դաժան վճիռին դէմ: Այդտեղ կարելի էր գտնել հայութեան յեղափոխական ոգին՝ չենթարկուիլ ու մերժել ճակատագրի տնօրինած դառն կարգադրութիւնը: Պէտք էր հայ երիտասարդութեան ճակատագրի որոշուած ուղղութիւնը փոխել Հ.Մ.Ը.Մ.ով:

Անձնապէս կը հաւատանք, որ Հ.Մ.Ը.Մ.ի ծնունդը տակաւին կը կարօտի ընկերաբանական, մարդկային ու հոգեբանական խոր ուսումնասիրութեան եւ պրպտումներու:

Հ.Մ.Ը.Մ.ը երբեք պէտք չէ դիտել իբրեւ սոսկ մարզական կամ սկաուտական միութիւն: Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադիր սերունդի թաքթիքը այն էր, որ Ֆիզիքապէս զօրացնելով հայ երիտասարդութիւնը, սկաուտական շարժումով կարգապահութեան ու չարքաչ կեանքի վարժեցնելով զանոնք, եւ ազգային ու բարոյական բարձր արժէքներով լիցքաւորելէ ետք, ձերբազատել հայ նորահաս սերունդները խոր յուսահատութենէ, վերահաստատել իր ինքնավստահութիւնը, եւ զարգացնել իր մէջ կեանքի հանդէպ պայծառատեսութիւնը: Մէկ խօսքով պատրաստել սերունդ մը, որ պատասխանատուութեան զգացումը ունի՝ հանդէպ իր անձին, ընտանիքին եւ իր ազգին:

Հ.Մ.Ը.Մ.ի գաղափարախօսութիւնը պարզ է ու խորիմաց: Այնտեղ տարբեր կազմակերպութիւններու ընտրած բարդ աշխարհահայեացքները գոյութիւն չունին, ինչպէս մարդ անհատի ծագումն ու զարգացումը: Ընկերութիւններու եւ ազգերու զարգացման եւ կազմաւորման հոլովոյթներն ու դասակարգային պայքարները կամ աւելի ուշ զարգացող իտէալները՝ դրամատիրութիւն, նիւթապաշտութիւն, ազատականութիւն:

Հ.Մ.Ը.Մ.ի ամբողջ դաւանանքը կամ հաւատոյ հանգանակը կարելի է խտացած կերպով գտնել իր գոյգ եւ հոյակապ նշանաբաններուն մէջ, որոնք կը պարունակեն մարդկային բարոյական արժէքներ եւ առաքինութիւններ:

Անոնցմէ առաջինը կը հանդիսանայ «Բարձրացի՛ր-բարձրացուր» նշանաբանը: Երկու պարզ բառեր, որոնց մէջ թաքնուած են հսկայ հատորներ լեցնող իմաստներ: Բարձրացի՛ր եւ զօրացի՛ր Ֆիզիքապէս եւ մտային զարգացումով, բարձրացի՛ր գործով, ժրջանութեամբ եւ ծառայասիրութեամբ: Բարձրացի՛ր կարգապահութեամբ, օրինապահութեամբ եւ կազմակերպուածութեամբ: Բարձրացի՛ր ազգային, մշակութային եւ կրօնական արժէքներով: Մուշեղ Իշխան պիտի ըսէր՝ «Հայացի՛ր-հայացո՛ւր»: Վերջապէս, բարձրացի՛ր համամարդկային բարոյական արժէքներով, ապա հետո՞ւ բարձ-

րացուր քոյրդ, եղբայրդ, ընտանիքդ, միութիւնդ, դպրոցդ, եկեղեցիդ, ազգդ, հայրենիքդ ու համամարդկային արժէքները:

Իսկ Հ.Մ.Ը.Մ.ի նշանաբաններուն երկրորդը կը հանդիսանայ. գայլիկը «Մի՛շտ լաւագոյն»ը խօսքի, մաքրութեան, կեց-լածքի, կարգապահութեան եւ հնազանդութեան մէջ: Փոքրիկին մատղաշ ու դողդոջ տարիքէն զգացնել արժէքաւոր ըլլալու իր հանգամանքը՝ իր մէջ զարգացնելով մարդկային ինքնավստահութիւնը:

Իսկ սկաուտը, «Մի՛շտ պատրաստ» ծառայելու ազնիւ ու բարի նպատակներու: Յարգելու եւ ծառայելու մեծերուն եւ պատասխանատուներուն: Օգնելու տկարներուն, անկարներուն եւ տարեցներուն, սիրելու փոքրերուն ու գուրգուրալու բոյսերուն, կենդանիներուն եւ կենսոլորտին: Պատրաստ են ծառայելու ու տէր կանգնելու հայկական մշակոյթին եւ արժէքներուն: Ծառայելու եւ նուիրուելու միութեան, ազգին ու հայրենիքին: Վերջապէս, ծառայելու համամարդկային արժէքներուն:

Ահաւասիկ, Հ.Մ.Ը.Մ.ական քոյրեր, եղբայրներ եւ ծնողներ, այս սկզբունքներով եւ արժէքներով Հ.Մ.Ը.Մ.ը 90 տարիներ շարունակ դաստիարակած է հայ երիտասարդութիւնը Սփիւռքի մէջ: Այսօր եթէ հաշուետուութեան իմաստով հարց տանք եւ ըսենք, որ արդե՞ք Հ.Մ.Ը.Մ.ը արդարացուցած է իր առաքելութիւնը: Ես առանց վերապահութեան պիտի պատասխանէի՝ այո՛ սիրելիներ եւ հազա՛ր այո, քանի որ-

Ա. Հ.Մ.Ը.Մ.ը հայ երիտասարդութեան մօտ յաջողած է կերտել իւրայատուկ եւ ինքնատիպ նկարագիր մը՝ կարգապահ, ծառայասէր, բարեխիղճ ու ազգանուէր հայ երիտասարդի տիպարը:

Բ. Հ.Մ.Ը.Մ.ը Սփիւռքի մէջ հայ երիտասարդութիւնը ազատած է յոռի բարքերէ՝ թմրամոլութիւն, կնամոլութիւն, ամուսնալուծում, գինեմոլութիւն ...: Հ.Մ.Ը.Մ.ականը առաքինի է եւ ժուժկալ:

Գ. Հ.Մ.Ը.Մ.ը հայ երիտասարդութեան վերադարձուցած է իր կորսուած ինքնավստահութիւնը, իր ազգային ու մարդկային արժանապատուութիւնը՝ միշտ անոնց հայեացքները ուղղելով դէպի Մասիսի գագաթին, դէպի մեր պատմական սկունքներուն:

Այո՛, Հ.Մ.Ը.Մ.ը գերազանցօրէն յաջողած է իր կոչումին մէջ, վկան այն է, որ 1918ին սկսած է մէկ մասնաճիւղով, իսկ այսօր, ցնծութեամբ ու հպարտութեամբ կը յայտարարենք, որ ան 100 մասնաճիւղ ունեցող միջազգային կազմակերպութիւն է, վերջինները կը հանդիսանան Հունգարիոյ եւ Մոսկրուայի մասնաճիւղերը:

Եթէ Քուէյթը ունի մէկ մասնաճիւղ, Սուրիան, Գանատան, Աւստրալիան ունին 5 մասնաճիւղեր, Պուլկարիան ունի 7, Լիբանանը՝ 9, Արեւելեան Միացեալ Նահանգները ունի 10ը, Արեւմտեան Միացեալ Նահանգները՝ 18: Իսկ Հայաստանը ունի 13 միաւորներ, որոնք Արցախի պաշտպանութեան համար նուիրած են բազմաթիւ նահատակներ. անոնց ցանկին գլխուն արծիւի հմայքով կանգնած է Հ.Մ.Ը.Մ.ի Հայաստանի հիմնադիր վարչութեան կազմի անդամ, նահատակ եղբ. Վարդան Բախչեան: Հպարտութեամբ կը յիշենք, որ այդ հիմնադիր



կազմին մէջ կը գտնուէր նաեւ Քուէյթի Ազգային Վարժարանի տնօրէն եղբ. Մանուկ Մանուկեան:

Հ.Մ.Ը.Մ-ի հոյակապ միութիւնը հետզհետէ զարգանալով ունեցած է իր հաշուառու եւ ծրագրող քառամեայ ընդհանուր ժողովները, որոնցմէ կ'ընտրուին համադրող ու կազմակերպող Հ.Մ.Ը.Մ-ի կեդրոնական Վարչութիւնները: Տասնեակ տարիներէ ի վեր Հ.Մ.Ը.Մ-ը օժտուած է իր հոյակապ պարբերաթերթով՝ «Մարզիկ»ով, որ բոլորին լուրերը կը հասցընէ բոլորին: Հ.Մ.Ը.Մ-ը ժամանակի ընթացքին ունեցած է իր բազմաթիւ հրատարակութիւններն ու դաստիարակչական գրականութիւնը: Վերջապէս, Հ.Մ.Ը.Մ-ը յաջողած է քառամեայ հերթականութեամբ աշխարհացրիւ հայ երիտասարդութիւնը հաւաքել Հայաստան, համա-Հ.Մ.Ը.Մ-ական նախանձելի, օգտաշատ եւ դաստիարակիչ բանակումներով:

Հ.Մ.Ը.Մ-ը կանուխէն հասած է այն եզրակացութեան, որ պէտք է մեր բոլոր ուժերը տրամադրուին հայ երիտասարդութեան առողջ զարգացման ու դաստիարակման: Պէտք է հօրացնել մեր ազգն ու հայրենիքը, քանի որ հայրենիքը պէտք ունի աշխոյժ, ջանասէր, ուսեալ ու զարգացած, ծառայասէր ու կարգապահ, հայրենասէր ու նուիրեալ հայ երիտասարդութեան:

Վերջապէս, վերջին գաղափարս պիտի ուզէի յատկացնել համաշխարհայնացման ճամբով մեր մէջ թափանցող խորթ ու յոռի բարքերուն, մոլութիւններուն ու մշակութային տար-

րինակ արժէքներուն, որոնք կրնան խաթարել հայ երիտասարդութեան առողջ, անխափան ու անչեղ զարգացման ընթացքը:

Մենք հաւատացած ենք, որ Հ.Մ.Ը.Մ-ը ճիշդ այն միութիւնն է, որ իր գաղափարախօսութեամբ ու կազմակերպական կառոյցներով կոչուած է պատուար հանդիսանալու այդ օտարամուտ ու կործանիչ մշակոյթներու թափանցումին, ի մի փրկելով հայ երիտասարդութիւնը: Հետեւաբար, այսօր, Հ.Մ.Ը.Մ-ի ներկայութիւնը նոյնքան անհրաժեշտ է, որքան էր անցնող 90 տարիներուն:


Մեր կարծիքով Հ.Մ.Ը.Մ-ի Քուէյթի մասնաճիւղի վարչութիւնը երբեք չէ սխալած Հ.Մ.Ը.Մ-ի 90ամեակի յիշատակը այսքան մեծ շուքով, հմայքով ու կարեւորութեամբ նշելու իր որոշումին մէջ, նկատի ունենալով Հ.Մ.Ը.Մ-ին վերապահուած անուրանալի ու անփոխարինելի դերը:

Շնորհաւոր Հ.Մ.Ը.Մ-ի Քուէյթի 25ամեայ ծառայութիւնը: Շնորհաւոր Հ.Մ.Ը.Մ-ի մայր միութեան 90ամեայ յաղթական երթը:


Փառք ու յարգանք Հ.Մ.Ը.Մ-ի հիմնադիր սերունդին: Հ.Մ.Ը.Մ-ի ծառայութեան ու պայծառատեսութեան անըստապառ աղբիւր:

**ARMENIA**  
for private and group trips  
[www.saberatours.fr](http://www.saberatours.fr)

# Saberatours Sevan Voyages




WITH THE COLLABORATION OF  
THE NEW AIRLINE COMPANY




Photos: © Yann Arthus-Bertrand, La Terre vue du Ciel. Licence 075 960031 Studio VICKEN 2005 PARIS


- Direct Flights  
PARIS  
YEREVAN  
PARIS
- Select  
your Journey
- Guided Tours  
for 8 Days  
or 12 Days




11, rue des Pyramides  
75001 Paris  
tel 331 42 96 10 10  
fax 331 42 96 18 77  
saberatours@selectour.com



48, cours de la Liberté  
69003 Lyon  
tel 334 78 60 13 66  
fax 334 78 60 92 26  
sevan@selectour.com



67, La Canebière  
13001 Marseille  
tel 334 95 09 30 60  
fax 334 95 09 30 61  
marseille@wasteels.fr




32-38, rue Hanrabedoutian  
Yerevan  
tel 374 10 52 55 55  
fax 374 10 56 40 30  
sabera@arminco.com



# ՀԱՐՑԱԶՐՈՅՑ՝ Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ԽՈՍՏՄՆԱԼԻՑ ԼՈՒՂՈՐԴՆԵՐ ՇՈՂԻԿ ԱԼԵՏԻՍԵԱՆԻ ԵՒ ԿԱԼԻՆ ՉԱՄԻՉԵԱՆԻ ՀԵՏ



Լողը, իբրև անհատական մարզաձեռն, իր յատուկ տեղը ունի Հ.Մ.Ը.Մ.ի Հալեպի մասնաճիւղին մօտ, որ իր մասնակցութիւնը կը բերէ Սուրիոյ եւ Հալեպի բոլոր մրցաշարքերուն: Վերջերս, մասնաճիւղի լուղորդներէն Շողիկ Ալետիսեան եւ Կալին Չամիչեան իրենց մասնակցութիւնը բերին Սուրիոյ ակումբներու մրցաշարքին եւ կարողացան գրաւել վեցերորդ դիրքը: Հետեւաբար, կ'արժէ մօտէն ծանօթանալ քոյրերուն եւ անոնց արձանագրած արդիւնքներուն:



**Հարցազրոյցը վարեց՝  
Րաֆֆի Սիւլահեան  
ՀԱԼԷՊ**

**Կրնա՞ք ծանօթացնել դուք ձեզ:**  
**Շողիկ-** Շողիկ Ալետիսեան, ծնած եմ 1994ին: Նախնական ուսումս ստացած եմ Ազգ. Հայկազեան վարժարանէն: Ներկայիս իններորդ դասարանի աշակերտ եմ Քառէն Եփփէ Ազգ. Ճեմարանին մէջ:  
**Կալին-** Կալին Չամիչեան, ծնած եմ 1995ին: Ազգ. Հայկազեան վարժարանը աւարտելով կը յաճախեմ Քառէն Եփփէ Ազգ. Ճեմարանը, իբրև ութերորդ դասարանի աշակերտ:

Մարզանքը ի՞նչ կը նշանակէ ձեզի համար: Ինչո՞ւ ընտրած էք լողի մարզաձեռնը:

**Շողիկ-** Մարզանքը ինծի համար առողջութիւնն եւ աշխուժութիւնն է: Ես փոքր տարիքէս ծնողքիս քաջալերանքով հետեւած եմ լողի դպրոցին: Միաժամանակ անդամ եմ Հ.Մ.Ը.Մ.ի պասքեթպոլի կրտսեր աղջկանց խումբին:

**Կալին-** Օրէն, ես հաճոյքով հետեւած եմ լողի խումբի փորձերուն եւ միշտ քաջալերանք ստացած եմ խումբի պատասխանատու քոյր Մարալ Էսմէրեանէն: Մարզանքի հանդէպ սէր ունենալով կարողացած եմ լաւ արդիւնքներ արձանագրել:

Ի՞նչ մրցումներու մասնակցած էք եւ ի՞նչ արդիւնքներ արձանագրած էք:

**Շողիկ-** Մասնակցած եմ Սուրիոյ եւ Հալեպի զանազան մրցաշարքերու եւ յաջողած եմ բաւական լաւ արդիւնքներ արձանագրել: Վերջերս, Հալեպի մէջ մասնակցեցայ լողի անհատական մրցաշարքին եւ գրաւեցի երկրորդ դիրքը, որմէ ետք Դամասկոսի մէջ տեղի ունեցած միջ-ակմբային մրցումներուն Հ.Մ.Ը.Մ. գրաւեց վեցերորդ դիրքը:

**Կալին-** Հալեպի մրցումներուն մասնակցեցայ եւ գրաւեցի երրորդ դիրքը: Մասնակցած եմ նաեւ դպրոցական եւ ախոյեանական զանազան մրցումներու եւ կարողացած եմ գրաւել առաջին դիրքերէն մէկը:

Նկատի ունենալով որ ձեր փորձերը կը կատարէք ամառ թէ ձմեռ, ի՞նչպէս կրնաք դասաւորել ուսման եւ մարզանքի ձեր ժամերը:

**Շողիկ-** Ինծի համար հիմնականը դասերս են, բայց համոզուած եմ, որ անձ մը եթէ փափաք ունենայ յաջողութիւն մը արձանագրելու, անկարելին կարելի կը դարձնէ իր երազը իրականացնելու համար: Ես փառք կու տամ Աստուծոյ, որ յաջողած եմ թէ՛ ուսումնական եւ թէ՛ մարզական կեանքիս մէջ:

**Կալին-** Չմեռները մենք ընդհանրապէս երկու փորձ կը կատարենք: Ես միշտ կը փորձեմ դասերս կանուխ աւարտել, նոյնիսկ եթէ կարիքը ըլլայ յաջորդ օրուան դասերը սերտել

կը սերտեմ, որպէսզի կարենամ փորձերուս հետեւիլ:

Որո՞նք աջակցած եւ քաջալերած են ձեզ: Ի՞նչ են ապագայի ձեր ծրագիրները:

**Շողիկ-** Ծնողքս հիմնական դեր ունի մարզական կեանքիս մէջ: Հօրս եւ մօրս քաջալերանքներն ու ցուցմունքները միշտ իրենց դրական ազդեցութիւնը ունեցած են վրաս: Կը փափաքիմ մասնակցութիւնս բերել միջազգային մրցումներու:

**Կալին-** Ծնողքիս եւ լողի պատասխանատու քոյր Մարալ Էսմէրեանի քաջալերանքները մղիչ ուժ ունենալով կը շարունակեմ մարզական երթս: Երազս է մօտիկ ապագային արժանանալ Սուրիոյ ախոյեանութեան:


**Վերջին խօսք:**

**Շողիկ-** Շնորհակալութիւն ծնողքիս, մարզիչիս, մասնաճիւղի վարչութեան եւ յատուկ շնորհակալութիւն՝ քոյր Մարալ Էսմէրեանին, իր ցուցաբերած աջախատանքին եւ հոգատարութեան համար: Ան միշտ մեզի հետ եղած է եւ հետապնդած է մեր բոլոր աշխատանքները:

**Կալին-** Կ'ուզեմ շնորհակալութիւն յայտնել լողի յանձնախումբի բոլոր անդամներուն, մարզիչին, վարչութեան եւ յատկապէս ծնողքիս, որ միշտ քաջալերած է զիս եւ ներկայ գտնուած է բոլոր մրցումներուս:



# ՀԱՅ ՄԱՐՄՆԱԿՐԹԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆԸ ՄԵՐՉԱԲՈՐ ԱՐԵԲԵԼՔԻ ՄԷՋ



1940ական Վարդանանի և Լիբանանի դահուկաբեկորի ֆեդերացիայի կողմից կազմակերպված մրցում էրզնի բարձունքին վրայ: 30 մրցակիցներու շարքին երկրորդ կը հանդիսանայ Յարուսիւն Նալչայեան, իսկ չորրորդ տեղը կը գրաւէ Յովհաննէս Նալչայեան:

## Ներսես Արք. Բախտիկեան (1911-1989) ԱՆՏԻՊ, Ը. ՄԱՍ

**Բ**ժուար էր այս ընդարձակ տարածութիւններուն վրայ զիրար գտնելը, բայց, նպատակին առջեւ անյողդող կանգնած երիտասարդները, գլելով խոչընդոտները՝ քալելով, յաճախ օրուան պաշարը ծրարած, ընդհանրապէս կիրակի օրերը, կը մեկնին խաղաղաշտ, հոն հաւաքուած հետաքրքիր պատանիներով պարիսպ կը քաշեն խաղավայրին շուրջ ու կը սկսին իրենց փորձերուն կամ մրցումներուն:

Միութիւնը հազիւ ինքզինք գտած, իր կազմութենէն քանի մը ամիս ետք, Վեհափառ Սահակ Կաթողիկոսին կը գրէ հետեւեալը․-

«Ներկայ գրութեամբ Ձերդ Վեհափառութեան կու գանք ներկայացնել, թէ չորս ամիս առաջ, տեղւոյս մէջ, կազմուած

է Զ.Մ.Ը.Մ.ի - Յայ Սարմն. Ընդհ. Միութիւն - Պէյրուսի մասնաճիւղը: Ան իր շուրջը հաւաքած է որակով եւ քանակով նկատելի երիտասարդներու եւ պատանիներու խումբ մը, որոնք ուխտած են ճիգ չխնայել հասնելու իրենց առաջադրած նպատակին:

«Առ այս կու գանք խնդրել Ձերդ Վեհափառութենէն, որ չզլանաք Ձեր հայրական հովանաւորութիւնը եւ օժանդակութիւնը այն բոլոր պարագաներուն, երբ միութիւնը կարիքը կը զգայ իր պատկառելի Զօրը դիմելու»:

Գրեթէ նոյն բովանդակութեամբ նամակներ կը ղրկուին նաեւ Հայ Ազգ. Միութեան, Հայ Աւետարանական եւ Հայ Կաթողիկէ համայնքներու հոգեւոր պետերուն ու դոկտ. Սոսրով Թիւթիւնճեանին, որ Հ.Հ. Պատուիրակութեան ներկայացուցիչն էր:

Հ.Մ.Ը.Մ.ի հրապարակային առաջին հանդէսը տեղի կ'ունենայ 7 Փետրուար 1925ին, թատրոն Քիւսալի մէջ: Մարզական այս երեկոյթը նպատակ ունէր ծանօթացնելու այս նոր կազմակերպութիւնը ժողովուրդին ու ձեռք բերուած հասոյթով գնելու մարզական պիտոյքներ:

Պայմաններու բերումով աւելի ուժ տրուած ու կիրարկուած ֆութպոլին հետ, իբրեւ մարմնակրթական միութիւն, հակառակ բոլոր տեսակի դժուարութիւններուն, իր մարզիկները դաշտ պիտի իջեցնէր: Առանց նկատի առնելու, որ Պէյրուսի մէջ կար երկու բարձր ուսման օտար հաստատութիւններու շրջափակերէն ներս կիրարկուող մարզական կեանքը, Հ.Մ.Ը.Մ.ը իր թոյլ ձեռքերով, բայց ինքնավստահ պոռթկումով կու գայ սարքելու իր առաջին ողիմպիականը, կու գայ վառելու առաջին ջահը Նաւասարդեան խաղերու, այս օտար ափերուն վրայ հազիւ տեղաւորուելի սկսող հայ ժողովուրդին եւ անոր նոր հասնող սերունդին հոգիներուն մէջ: Կու գայ հայուն փշրուած ֆիզիքականին ձեւ ու մարմին, անոր հոգիին խանդ ու աւիւն տալու: Ու այս՝ 1925 Մայիս 17ին, Ռաս Պէյրուսի Ֆրանսական գինուորական դաշտին վրայ:

Տակաւին ափ մը հող վարձու կամ սեփական չունեցող այս կազմակերպութիւնը իր ծրագրին մէջ յաջողելու համար, ամէնէն առաջ, հրամայական էր ապահովել ողիմպիականին համար յարմար մարզադաշտ: Ամերիկեան Համալսարանի տնօրէնութեան նամակ մը կը գրուի: Նամակը գնահատելէ ետք այդ հաստատութեան համակրական վերաբերմունքը հայ ժողովուրդին հանդէպ, իր 17 Սեպտեմբեր 1925 թուակիր նամակին մէջ կ'աւելցնէ. «Որոշեր ենք Մայիս 17ին, Սուրիոյ մէջ, Լիբանան, մեր առաջին դաշտահանդէսը սարքել, բայց գիտնալու էք որ առանց ձեր թանկագին օգնութեանը, դաշտահանդէս մը սարքելու մեր ճիգը ի դերեւ պիտի ելլէ: Մեր



նախաքայլերուն մէջ, մենք, բազմաթիւ դժուարութիւններու հանդիպելու ենք, որոնց գլխաւորը դաշտի մը պարագան է: Վստահ ենք որ մեր խնդրանքը պիտի չմերժուի եւ պիտի արտօնէք որ Ձեր դաշտին վրայ մեր դաշտահանդէսը սարքենք»:

Այս նամակէն զատ կը գրուին երկու նամակներ եւս այդ օրերուն անուն հանած բժիշկներու՝ Ճանեանին եւ Ենիգոմշուեանին: Նոյն բովանդակութեամբ նամակներուն մէջ ըսուած է.

«Նկատի ունենալով այն համակրանքն ու յարգանքը որ կը վայելէք Ամերիկեան Համալսարանի ղեկավար շրջանակին մէջ, միութիւնս կու գայ խնդրելու Ձեզմէ, որ տեար տոքթ. Ճանեանին հետ, որուն ալ դիմուած է մեր կողմէ, հաճէիք յաջողցնել մեր հետեւեալ խնդրանքը:

«Միութիւնս որ միակ հայ մարմնամարզական կազմակերպութիւնն է տեղւոյս մէջ, ձեռնարկած է Սուրիոյ շրջանի անդրանիկ ողիմպիական խաղերու կազմակերպման: Արդ, նկատելով որ այդ հանդէսին միակ յարմար վայրը Ամերիկեան Համալսարանի խաղավայրն է, կու գանք խնդրել Ձեզմէ որ բարի ըլլաք դիմել ուր որ անկէ մեզի տրամադրելի դարձնելու վերոյիշեալ դաշտը Մայիս 10ին՝ վերջին փորձերուն եւ 17ին ալ՝ մրցումներուն համար»:

Ամերիկեան Համալսարանի տնօրէնութիւնը կը մերժէ խնդրագիրը, առարկելով թէ համալսարանի ներքին կանոնագիրը կ'արգիլէ ոչ-ուսանողական կազմակերպութիւններու դաշտ տրամադրելը: Հ.Մ.Ը.Մ-ի վարիչները, առանց յուսահատելու, կը դիմեն Փրանսական բանակի մարզական բաժնի վարիչ հարիւրապետ Լաւոյին, իրենց տրամադրելու Ռաս Պէյրութի գինուորական դաշտը:

Առաջին ողիմպիականը տպաւորիչ յաջողութեան պսակելու համար, կազմակերպիչները՝ գլխաւորութեամբ Ժիրայր Պալեանին ու Ալպէր Յակոբեանին, ճիգ չեն խնայեր: Խնդրագիր մը Անթիլիասի որբանոցի տնօրէնութեան կ'ապահովէ որբանոցին նուագախումբին հետ նաեւ սկաուտներու եւ մարզիկներու մասնակցութիւնը: Ապրիլ 15, 1925 թուակիր նամակով դիմում կ'ըլլայ Ժիպէյլի որբանոցին՝ ապահովելու համար մարզիկները: Այս ողիմպիականին կը մասնակցին նաեւ Հայ կաթողիկէ որբանոցին սկաուտները:

Փրանսական բանակի մարզական վարիչ, հարիւրապետ Լաւո ո՛չ միայն մարզադաշտը կը տրամադրէ, այլեւ՝ վրան, գործիքներ ու գինուորական դատաւորներ, ինք ստանձնելով պատուոյ դատաւորի դերը: Իսկ դաշտի ընդհանուր դատաւորի գործնական դերը կը տանի Ժիրայր Պալեան: Օրուան դաշտային բժիշկն է տոքթ. Յովսէփ Ենիգոմշուեան, թագուհին՝ տիկ. Ս. Կիւրճեան, պատուոյ օրիորդներ՝ Արմինէ Սարաֆեան եւ Մելինէ Գուլումճեան:

Հ.Մ.Ը.Մ-ի առաջին ողիմպիականին ախոյեան կը հանդի-



1949. Հ.Մ.Ը.Մ-ի տօնակատարութիւն սինեմա «Ռոքսի»ի մէջ:

սանայ Յովհաննէս Շահինեան, որուն մասին Ժիպէյլի որբանոցի «Տուն» խմորատիպ հանդէսին մէջ կը կարդանք. «Եղած է որբանոցին լաւագոյն մարզիկներէն, այժմ ուսանող Պէյրութի Ամերիկեան Համալսարանի: Շահինեան ցարդ 14 զանազան մարմնակրթական մրցումներու մասնակցած է. երկու անգամ երրորդութիւն, իսկ տասներկու անգամ առաջնութիւն շահած է... Փութպոլի մրցումներու ատեն գրեթէ միշտ գերակշիռ դիրք տուած է իր խումբին: Պէյրութի մէջ տեղի ունեցած Հ.Մ.Ը.Մ-ի սարքած դաշտահանդէսին մէջ ախոյեանութեան ոսկի մետալ ստացաւ»:

Ողիմպիականէն անմիջապէս ետք, Ռումանիոյ Հ.Մ.Ը.Մ-ի վարչութեան գրուած նամակի մը պատճէնէն կը քաղենք հետեւեալը. «...Մասնաճիւղս կազմուած է մօտ ութ ամիսներ առաջ, ունի 70 գործօն անդամներ: Այն գործունէութիւնը, զոր ցոյց տուաւ մասնաճիւղս իր կազմութենէն ի վեր, ստեղծած է համակրական լայն մթնոլորտ մը, մասնաւորաբար մեր տարեկան ողիմպիականէն վերջ, Հ.Մ.Ը.Մ-ը գուրգուրանքի առարկան է տեղւոյս ազգային բոլոր կազմակերպութիւններուն ու հասարակութեան: Դաշտի չգոյութեան հետեւանքով Փրանսական իշխանութեան մօտ մեր դիմումը դրական պատասխանի արժանացաւ ու մեծ քաջալերանքի՝ բանակին մարզական վարիչ հարիւրապետին կողմէ:

«Այժմ չունենալով սեփական մարզարան, ստիպուած ենք փորձերը կատարել զանազան եւ հեռաւոր վայրերու վրայ, ինչ որ մեծ արգելք կը հանդիսանայ մեր յառաջդիմութեան: Պիտի ջանանք ունենալ մեր դաշտը եւ հաւաքավայրը, որոնք մեծագոյն երաշխիքը պիտի ըլլան մեր զարգացումին: Այժմ ունինք Փութպոլի երկու խումբեր»:

(Շար. 8)

(1), «Տուն», 1925 Յունիս:





# ՖՈՒԹՊՈՒԼԻ ՆՈՐ ԱՍՏՂԸ՝ ԼԻՈՆԷԼ ՄԵՍՍԻ

## Գ. Թորոյեան ՊԵՅՐՈՒԹ

Անուն.- Լիոնել Անտրէս Մեսսի  
Ծննդեան թուական.- 24 Յունիս 1987  
Ծննդավայր.- Ռոզարիօ, Արժանթին  
Ակումբներ.- 1995-2000՝ Նիւ Օլտ  
Պոյզ  
2000էն մինչեւ օրս՝ Պարսելոնա  
Դիրք.- Յառաջապահ

**Ի**նչպէս հարաւային ամերիկացի ամէն երեխայի, այնպէս ալ Լիոնելի երազն էր դառնալ հանրայայտ ֆուտպոլիստ եւ մաս կազմելով հռչակաւոր ակումբի մը, մեծ գումարներ շահիլ եւ անուն ձգել ֆուտպոլի պատմութեան մէջ:

Փոքր տարիքին ան աչքի կը զարնէ արդէն կարգ մը ակումբներու պատասխանատուներուն կողմէ: Ռիվըր Փլէյթ ակումբը կը փորձէ ձեռք ձգել զայն, սակայն բաւարար գումարի չգոյութեան պատճառով կը հրաժարի: Պարսելոնայի պատասխանատուներէն Քարլէս Ռեքսաչ կը յաջողի համոզել պատանի Մեսսի ընտանիքը եւ 2000 թուականին անոնք կը տեղափոխուին Սպանիա, ուր Մեսսի մաս կը կազմէ Պարսելոնայի:

Հոս կը սկսի Մեսսիի ֆուտպոլային կեանքին սկիզբը: Շուտով յաջողութիւնները իրարու կը յաջորդեն: Պարսելոնայի մէջ Մեսսիի անունը արդէն տարածուած է: Հազիւ 17 տարեկան այս պատանին կը հրաւիրուի մաս կազմելու Պարսելոնայի առաջին կազմին: Անոր սիրագործութիւնները Պարսելոնայի հետ կը սկսին 2004 թուականին: Առաջին անգամ ան դաշտ կը ներկայանայ 16 Հոկտեմբեր 2004ին, էսփանիոլի դէմ: Այսպէսով ան կը դառնայ կրտսերագոյն խաղացողը, որ հանդէս կու գայ Սպանիոյ ախոյեանութեան: Պարսելոնայի հետ իր առաջին կողը ան կը նշանա-

կէ 1 Մայիս 2005ին, Ալպասեթէի դէմ:

Մեսսի Պարսելոնայի հետ ցարդ կատարած է 98 մրցում եւ նշանակած է 47 կոլ: Համեմատութիւն մը, որ ոչ մէկ ֆուտպոլիստի մօտ կարելի է գտնել: Անոր նշանակած կոլերը ունին մեծ գեղեցկութիւն: 18 Ապրիլ 2007ին կեթաֆէի դէմ նշանակած Մեսսիի կողը նոյն կոլն էր, ինչ որ Մարատոնա նշանակած էր 1986ին Անգլիոյ դէմ: Մեսսի դաշտին մէջ վազեց նոյնքան (62 մետր), խաբեց նոյնքան խաղացողներ (6 խաղացող) եւ կողը նշանակեց գրեթէ նոյն տեղէն: Ու այդ կոլն էտք ան անուանուեցաւ Մեսսիտոնա:

Բնականաբար, ակումբին կողքին Մեսսի յաջողութիւններ պիտի ունենար նաեւ ազգային խումբին հետ: Յունիս 2004ին ան մաս կը կազմէ Արժանթինի կրտսերներու ազգային խումբին եւ իր առաջին մրցումը կը կատարէ Փարակուէյի դէմ: Հազիւ տարի մը ետք, 4 Օգոստոս 2005ին, ան մաս կը կազմէ Արժանթինի ազգային խումբին եւ Հունգարիոյ դէմ տեղի ունեցող բարեկամական մրցումին դաշտ կը ներկայանայ 63րդ վայրկեանին, սակայն 40 երկվայրկեան ետք իրաւարարը կարմիր քարտով զայն կը հեռացնէ դաշտէն: 2005 Սեպտեմբեր 3ին ան կը մասնակցի Փերուի դէմ մրցումին: Խաղին աւարտին Մեսսի կ'ըսէ. «Առաջինը փորձ մըն էր, իսկ այս՝ մրցում»: Մեսսի իր մասնակցութիւնը կը բերէ Մոնտիալի եւ Քոփա Ամերիկայի մրցումներուն: Սակայն, նորեկ ֆուտպոլիստ ըլլալով, ան յաճախ նկատի կ'առնուի իբրեւ պահեստի մարզիկ: Արժանթինի հետ ան ցարդ կատարած է 35 մրցում եւ նշանակած է 12 կոլ:

Ռեքսաչ չէր սխալած Մեսսին հրաւիրելով Պարսելոնա: Այսօր հազիւ 22 տարեկան Մեսսին արդէն ֆուտպոլի աստղ մըն է: Արժանթինցի այս ֆուտպոլիստը կը նկատուի Մարատոնայի յաջորդը:

Նոյնինքն Մարատոնա կը խոստովանի այդ իրականութիւնը: Ունենալով թեքնիք բարձր կարողութիւններ, իր տրիպլէներով եւ գեղեցիկ ու ճշգրիտ փոխանցումներով ան կը նոյնացուի Մարատոնայի հետ, սակայն չունի անոր ֆիզիքական ուժը: Մեսսի, սակայն, ունի այլ առաւելութիւն մը՝ արագութիւն եւ կոլ նշանակելու ճշգրտութիւն: Մեծ քառակուսիէն ներս ան սարսափն է մրցակից կազմի մարզիկներուն: Կա՛մ պիտի նշանակէ, կամ վտանգաւոր փոխանցում կատարէ: Այս իմաստով ան կը նրմանի հոլանտացի Քրոյֆի: Այլ խօսքով, Մեսսի իւրայատուկ ֆուտպոլիստ մըն է, որ կատարեալ է իր խաղով: Անոր մասնակցութիւնը Պարսելոնայի խաղերուն համը ու հոտն է մրցումին: Երբեմն պահեստի մարզիկ ըլլալով դաշտ կը ներկայանայ երկրորդ խաղակէսին եւ արդիւնք կը շրջէ: Մեսսի Պարսելոնայի ալֆան ու օմեկան դարձած է: Ներկայիս, երբ աստղեր չկան ֆուտպոլի աշխարհին մէջ, Մեսսիի տիպարը հմայած է ֆուտպոլասէրները: Պէտք է արձանագրել, որ ՅԻՅԱ անարդարութիւն գործեց, երբ 2008ի տարուան լաւագոյն ֆուտպոլիստը հռչակեց Քրիստիանօ Ռոնալտոն: Արժանին արժանթինցին էր:

Մեսսի տակաւին իր ասպարէզին սկզբնաւորութիւնն է որ կ'ապրի: Վստահաբար ան տարիներ շարունակ գրել ու խօսիլ պիտի տայ իր մասին: Նշեցինք արդէն, որ ան կը նկատուի Մարատոնայի յաջորդը Արժանթինի մէջ: Մարատոնան եւս անցաւ Պարսելոնայի բովէն ու հասաւ ֆուտպոլի ասպարէզի գագաթնակէտին: Մեսսի այսօր Պարսելոնայի հետ աւելի յաջողած է՝ քան Մարատոնա, սակայն արդեօք Մեսսի 2010ին պիտի կարողանա՞յ կրկնել այն ինչ որ կարողացաւ Մարատոնան իրագործել 1986ին, Մեքսիքոյի մէջ:





ՔՈՒԷՅԹԻ ՀԱՅՈՒԹԻՒՆԸ ՓԱՌԱՒՈՐ ՇՈՒՔՈՎ ՆՇԵՑ  
Հ.Մ.Ը.Մ.Ի ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ 90ԱՄԵԱԿԸ  
ԵՒ ՔՈՒԷՅԹԻ ՄԵԿՈՒՄԻ ՄԱՍՆԱԾԻՒՂԻՆ 25ԱՄԵԱԿԸ

Կարո Յ. Արսլանեան  
ՔՈՒԷՅԹ

Երկուշաբթի, 8 Դեկտեմբեր 2008ի երեկոյեան ժամը 10ին, Քուէյթի «Բըրաուն Փլազա» պանդոկի «Անտալուզ» շքեղ սրահին մեջ տեղի ունեցաւ փառատոր տօնախմբութիւն մը՝ նուիրուած Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան 90ամեակին եւ Քուէյթի մասնաճիւղի 25ամեակին, կազմակերպութեամբ մասնաճիւղի վարչութեան, հովանաւորութեամբ Քուէյթի եւ Արաբական Ծոցի երկիրներու Կաթողիկոսական Փոխանորդ Կորիւն Արք. Պապեանի եւ նախագահութեամբ՝







տէր եւ տիկ. Ալեքսան Պէրպէրանի:

Իրենց ներկայութեամբ ձեռնարկին ճոխութիւնն ու փայլքը կրկնակի բարձրացուցին Արաբական Ծոցի Երկիրներու Հ.Հ. դեսպան՝ տէր եւ տիկ. Վահագն Մելիքեան, դեսպանատան առաջին քարտուղար Մհեր Մկրտումեան,

Պէյրուսի «Ազդակ» օրաթերթի գլխաւոր խմբագիր տէր եւ տիկ. Շահան Գանտահարեան եւ Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոնական Վարչութեան նախկին ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան, որ այդ օրերուն ազգային այլ առաքելութեամբ մը կը գտնուէր Քուէյթ: Հիւրաբար

ներկայ էին նաեւ Հ.Մ.Ը.Մ.ի Հայկալի տեղական վարչութեան ատենապետ եղբ. Նուպար Թիւթիւնճեան եւ վարչական եղբայրներէն տէր եւ տիկ. Սեպուհ Մուրատեան:

Քուէյթի, Հայաստանի եւ Հ.Մ.Ը.Մ.ի քայլերգներէն ետք, ձեռնարկը բացւած յայտարարեցին օրուան հանդիսավարներ՝ քոյր Մարալ Համպոյեան եւ եղբ. Յարութ Պէտիրեան:

Այս առիթով կազմուած կեդրոնական յանձնախումբին խօսքը փոխանցեց եղբ. Յարութ Պէտիրեան: Ապա, ներկաներուն ցուցադրուեցաւ Լիբանանի մէջ ծանօթ մտաւորականներու եւ վաստակաշատ Հ.Մ.Ը.Մ.ականներու սրտի մաղթանքներն ու շնորհաւորական խօսքերը փոխանցող յատուկ խտասալիկը:

Բեմ բարձրացաւ մասնաճիւղի ատենապետ եղբ. Գէորգ Չաղլասեան՝ փոխանցելու վարչութեան խօսքը: Ան իր խօսքին մէջ ըսաւ. «Ահաւասիկ ոգեւորանքս պահ մը: Ժամանակի սրընթաց սլաքը իր անխոնջ վազքին հետ մեզի ցոյց կու տայ 90 թուանշանը. իննսուն, որ կը նշանակէ աշխատանք, պատասխանատուութիւն, նուիրում... իննսուն, որ կը նշանակէ՝ կարգապահութիւն, հրահանգի ենթարկուիլ, բարիք գործել ու զոհողութեան դիմաց խոնարհիլ...: Ահա այս պահուն մեզի կը մնայ շնորհաւորել եւ միասնաբար բաժակ բարձրացնելով ըսել. - Թող շնորհաւոր ըլլայ բոլորիս՝ Հ.Մ.Ը.Մ.ի 90ամեայ յաղթանակը: Պէտք է շնորհաւորել նաեւ համայն Քուէյթի հայութիւնը՝ Հ.Մ.Ը.Մ.ի Քուէյթի մասնաճիւղի հիմնադրութեան 25ամեակին ուրախ առթիւ:





Թո՛ղ մեր մասնաճիւղը բարձրանայ եւ իր հետ բարձրացնէ գաղութը եւ իր գաւակները»:

Ապա տեղի ունեցաւ օրուան նախագահութիւնը ստանձնած տէր եւ տիկ. Ալեքսան Պէրպէրեանի նախագահութեան պաշտօնական ստանձնումը: Նախագահը վարչութեան կողմէ ստացաւ յատուկ շքանշան, յետոյ ներկաները ունկնդրեցին նախագահին սրտի խօսքը՝ ուղղուած բոլոր Հ.Մ.Ը.Մ.ականներուն: Խօսքը ընթերցեց Եղբ. Յարութ Պէտրեան:

Օրուան պատգամաբերն էր Պէյրութի «Ազդակ» օրաթերթի գլխաւոր խմբագիր Շահան Գանտահարեան: Ան իր խորաթափանց հայեացքով լուսարձակի տակ առաւ բազմաթիւ հարցեր ու մատնանշեց. «Թերեւս ոչ ոք անդրադարձած է, որ Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնը, այսօր, ամբողջ հայութեան՝ սկսելով Հայաստանէն հասնելով մինչեւ Սփիւռքի ամէնէն հեռաւոր գաղութը, ամենաշատ անդամ ունեցող կազմակերպութիւնն է: Հոն է, որ հայ ծնողը կ'առաջնորդէ իր գաւակը, հայ դպրոցին եւ եկեղեցւոյ կողքին: Հոն է, որ հայ ծնողը իր գաւակը պիտի ուզէ տեսնել Հ.Մ.Ը.Մ.ի տարագրով՝ հայկական Եռագոյնին դիմաց՝ առաջին պատիւը տալու պահուն: Հոն է, որ հայ մանուկը հայրենասիրական դաստիարակութեան տարբեր աստիճաններ պիտի թեւակոխէ, պիտի սիրէ իր հայրենիքը, իր միութիւնը՝ իբրեւ վաղուան տի-



պար քաղաքացի եւ բարոյական արժէքներու կրողը:

«Եւ կա՞յ աւելի գործնական օրինակ Հայաստան-Սփիւռք համագործակցութեան, քան այն ինչ որ կ'իրականացնէ Հ.Մ.Ը.Մ.ը հազարաւոր երիտասարդներ տարբեր առիթներով Հայաստանի մէջ համախմբելու եւ Սփիւռքի Հ.Մ.Ը.Մ.ականները նոյն նպատակի առաջնորդելով: Հայաստան-Սփիւռք համագործակցութիւնը համախմբուելով, կենդանի շփումով, միասնաբար աշխատելով կը կայանայ, իսկ համախմբելու եւ միասնաբար աշխատելու ամէնէն յաջող օրինակներուն տակ մենք կը գտնենք մեծ տառերով Հ.Մ.Ը.Մ.ի ստորագրութիւնը: Սփիւռքեան մեծագոյն կազմակերպութիւնը՝ Հ.Մ.Ը.Մ.ը, իր անդամներու թիւով, բազմաչերտ գործունէութեամբ, հայաստանեան եւ սփիւռքեան կառոյցներով, սկառտական, մարզական եւ միութենական շարժումներով պիտի գրաւէ սփիւռքեան հասարակա-

կան կազմակերպութիւններու առաջին դիրքը»:

Այնուհետեւ, ջերմ միջնորդութեամբ շարունակուեցաւ եւ բեմ բարձրացաւ Հալէպէն ժամանած երգչուհի Աննա Հարպոյեան, որուն կ'ընկերակցէր արուեստագէտ Սարգիս Ադամեան:

Միջնորդութիւն յաւելեալ խանդավառութիւնը վստահուած էր այս անգամ Լիբանանէն ժամանած երգիչ Արարատ Ահարոնեանին եւ անոր ընկերակցող Շանթ Տիչչէֆէնեանին:

Հասած էր պաշտօնական յայտագրին երկրորդ բաժինը, ուր խանդավառութիւնը հասած էր գագաթնակէտին: Հ.Մ.Ը.Մ.ի շարքերէն ներս 25 տարիներու իրենց ազնիւ ծառայութեան համար, նուիրեալ Հ.Մ.Ը.Մ.ականներու եւ ազգայիններու պարգեւատրում: Մասնաճիւղի ատենապետին ձեռամբ պարգեւատրուեցան Քուէյթի եւ Արաբական Ծոցի երկիրներու Կաթողիկոսական Փոխանորդ Կորիւն Արք. Պապեան, Քուէյթի եւ Արաբական Ծոցի Եկիրներու Հ.Հ. դեսպան Վահագն Մելիքեան, Արտակ Քհնյ. Քէհեայեան եւ օրուան նախագահ եղբ. Ալեքսան Պէրպէրեան:

Շարունակուելով պարգեւատրումը, Սրբազան Հօր ձեռամբ պարգեւատրուեցան Ժագ Պարտաքճեան, Մելիք Մելիքսէթեան եւ Կիրակոս Տարագճեան: Օրուան նախագահին ձեռամբ պարգեւատրուեցան հանդիսութեան արժանաւոր հիւրերը՝ եղբայրներ Շահան Գանտահարեան, Գառնիկ Մկրտիչեան, Նու-







պար թիւթիւնճեան, Սեպուհ Մուրատեան, մասնաճիւղի 25ամեակի յուշամատենանի մեկենաս Սամուէլ Պոյաճեան, տօնակատարութեան թղթապանակներու հովանաւորներ Մուսիւր Դարբինեան եւ Ալպէր Սապունճեան:

Քահանայ Հօր ձեռամբ պարգեւատրուեցան գաղութի ազգային մարմիններու՝ թեմական խորհուրդի, Ազգային Վարչութեան, Ազգային Վարժարանի հոգաբարձութեան, Ազգային Վարժարանի տնօրէնութեան, ՀՕՄԻ մասնաճիւղի վարչութեան ներկայացուցիչները եւ Վարդան Քէօշկէրեան:

Վարչութեան ատենապետին ձեռամբ պարգեւատրուեցան Հ.Մ.Ը.Մ.ի ձեռնարկներու նախկին նախագահներ՝ եղբայրներ Ալեքսան Մելքոնեան եւ Կիրակոս Գուլումճեան, ինչպէս նաեւ՝ Հ.Մ.Ը.Մ.ի «Ծառայութեան» շքանշան ստացող եղբայրներ Գրիգոր Սուաքճեան, Յովհաննէս Աւագեան, Վարուժան Արմուտճեան եւ նախկին խմբապետ եղբ. Յակոբ Մելիքսէթեան:

Հայաստանի դեսպան Վահագն Մելիքեանի ձեռամբ պարգեւատրուեցան Հ.Մ.Ը.Մ.ի վարչութեան նախկին ատենապետներ՝ Ժան Պէպէճեան, Անդրանիկ Գոճապաշեան, Վահան Մարտիրոսեան, Յակոբ Պէտիրեան, Յակոբ Յովակիմեան, Գէորգ Չաղլասեան եւ Արամ Մահտեսեան: Նոյն առիթով, յետ մահու պարգեւատրուեցաւ մասնաճիւղի հիմնադիրներէն եղբ. Գաբրիէլ Թասլաքեան: Ձեռնարկին սատար հանդիսացող նուիրեալներ քոյր Մարալ Համպոյեան եւ եղբայրներ Յակոբ Պէրպէրեան եւ Սարգիս Սարգիսեան եւս պարգեւատրուեցան դեսպանին ձեռամբ:

Այս տպաւորիչ պահը թէ՛ յուզիչ էր եւ թէ՛ հպարտալի: Պատմութիւնը կարծես լեզու առած էր, կենդանացած էր եւ հիմա իր ճաճանչներով մեզ կը հրահրէր: Ամէն տեղ աշխուժութիւն եւ յաղթանակ կը բուրէր: Ներկաները չափազանց յուզուած էին:

Պարգեւատրման արարողութեան ընթացքին տեղի ունեցաւ յատուկ անակնկալ մը: Հ.Մ.Ը.Մ.ի Քուէյթի մասնաճիւղի վարչութեան կողմէ «Ծառայութեան» շքանշանով պարգեւատրուեցաւ եղբ. Յարութ Պէտիրեան:

Արարողութենէն ետք տեղի ունեցաւ օրուան յատուկ կարկանդակի հատումը՝ պարգեւատրուող եղբայրներու ձեռամբ: Ապա խօսք առաւ Սրբազան Հայրը եւ բարձր գնահատեց Հ.Մ.Ը.Մ.ի նպատակը, կամքն ու աշխատանքը: Ան ըսաւ, որ Հ.Մ.Ը.Մ.ը հայ ընտանիքի եւ հայ իրականութեան դարբնոցն է, որուն շարքերուն մէջ կը դաստիարակուի այսօրուան սերունդը՝ պատրաստելու համար ապագայի պայծառ հայր:

Ապա, խօսք առաւ Հ.Հ. դեսպան Վահագն Մելիքեան: Ան իր կարգին բարձր գնահատեց Հ.Մ.Ը.Մ.ի տարած աշխատանքը գաղութին մէջ եւ բարի երթ մաղթեց Հ.Մ.Ը.Մ.ի յառաջիկայ աշխատանքներուն: Ան կոչ ուղղեց բոլոր

Հ.Մ.Ը.Մ.ականներուն, որպէսզի բարձր պահեն իրենց վստահուած աշխատանքի հանդէպ կամքն ու կորովը ու անվարան քայլեն Հ.Մ.Ը.Մ.ի հարթած ճամբէն: Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոնական Վարչութեան նախկին ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան խօսք առնելով շնորհաւորեց միութեան 90ամեակը եւ Քուէյթի մասնաճիւղին 25ամեակը եւ ըսաւ. «90ամեակի հաւաքը շարժառիթ մըն է 90 տարիներու պատմութեան անդարձ, բայց միշտ ապրող էջերը թերթատելու, յստակ հայեացքով պատմութեան ոսկեմատենանէն դասեր քաղելու եւ հաստատ քայլերով շարունակելու դէպի նոր հորիզոն բացուող յաւիտենական ուղին՝ նոյն հաւատքով, միեւնոյն վճռակամութեամբ եւ ամբողջական նուիրումով»:

Բարձր ոգեւորութեան պահուն, պարտաճանաչ նուիրատուներ քսակները լայն բանալով իրենց մասնակցութիւնը բերին Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքին ջահը վառ պահելու գործին:

Երգիչներու բեմ բարձրացումով, պար ու երգով, Քուէյթի հայութեան ցնծութիւնը շարունակուեցաւ մինչեւ առաւօտեան ժամեր, որմէ ետք յեղափոխական երգերով օրուան տօնակատարութիւնը հասաւ իր աւարտին:

Ձեռնարկին աւարտին, օրուան հանդիսավար եղբ. Յարութ Պէտիրեան շնորհակալական խօսքեր յայտնեց յրբեւեանական ձեռնակներու գրականութիւնը մշակած քոյր Մարալ Համպոյեանին եւ եղբ. Կարօ Յ. Արսլանեանին, նաեւ՝ Սարգիս Սարգիսեանին եւ Յակոբ Պէրպէրեանին, որոնց վստահուած էր ձեւաւորման եւ տպագրական բոլոր աշխատանքները, Գրիգոր Պէտիրեանին, որուն ձայնային դասաւորման եւ երգացանկերու բծախնդիր ընտրութիւնը մեծ ճոխութիւն ստեղծեց ամբողջ ձեռնարկի տեւողութեան: Եղբ. Պէտիրեան յատուկ շնորհակալութիւն փոխանցեց նաեւ կեդրոնական յանձնախումբի եւ ենթախանձնախումբի բոլոր նուիրեալներուն, յատկապէս եղբ. Կարպիս Գազլեանին, որ ո՛չ մէկ ճիգ խնայեց ձեռնարկի յաջողութեան համար, նաեւ Ազգային Վարժարանի հոգաբարձութեան եւ տնօրէնութեան:



# Հ.Մ.Ը.Մ.Ի ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ 90ԱՄԵԱԿԻՆ ԵՒ ԲՈՒԷՅԹԻ ՄԱՍՆԱԾԻՂԻ 25ԱՄԵԱԿԻՆ ՆՈՒԻՐՈՒՄԸ ՍԿԱՌԵՏԱԿԱՆ ԶԵՌՆԱՐԿ՝ ԲՈՒԷՅԹԻ ՄԷՁ

**Հ** .Մ.Ը.Մ.Ի Քոլեկթի մասնաճիւղի վարչութեան նախաձեռնութեամբ եւ մասնաճիւղի խմբապետական կազմին կազմակերպութեամբ, Ուրբաթ, 28 Նոյեմբեր 2008ին, երեկոյեան ժամը 6.30ին, Ազգային Վարժարանի շրջափակէն ներս տեղի ունեցաւ միութեան հիմնադրութեան 90ամեակին եւ մասնաճիւղին հիմնադրութեան 25ամեակին ուրախ առիթով սկաուտական մեծաշուք ձեռնարկ մը:



գեր՝ «Արիւնոտ դրօշ», «Խուժան ասկեար», «Գնդակ որոտաց»:

Մասնաճիւղին խմբապետական կազմին խօսքը փոխանցեց եղբ. Ղազար Ղազէլեան: Ան անդրադարձաւ Հ.Մ.Ը.Մ.ականի ծառայութեան ու զոհողութեան ընթացումին: Եղբ. Ղազէլեան կոչ ուղղեց սկաուտներուն՝ հաւատարիմ մնալու

Այս առիթով պատրաստուած էր յատուկ յայտագիր, որ կ'ընդգրկէր երգ, ասմունք եւ մասնաճիւղին 25ամեակին նուիրուած խտասայլիկի ցուցադրութիւն: Ներկայ էին ազգային մարմիններու ներկայացուցիչներ, գաղութի հոգեւոր հովիւ՝ Արտակ Քհնյ. Քէհեայեան եւ 500է աւելի ծնողներ եւ հանդիսատեսներ:

Զեռնարկը բացուեցաւ սկաուտական խումբերու աւանդական տողանցքով, առաջնորդութեամբ մասնաճիւղի շեփորախումբին, ղեկավարութեամբ՝ եղբ. Րաֆֆի Ներսէսեանի: Շեփորներու ստեղծած խանդավառութիւնը մեծ էր. անոնք նուագեցին Քոլեկթի եւ Հայաստանի քայլերգները, ապա պարբերաբար ներկայացուցին ազգային-յեղափոխական եր-

այդ ըմբռնումին եւ մաղթեց, որ անհրաժեշտ բժախնդրութիւնը ցուցաբերեն իրենց աշխատանքներուն ու կեանքին մէջ:

Բեմ հրաւիրուեցաւ մասնաճիւղի վարչութեան ատենապետ եղբ. Գէորգ Զաղլասեան, որպէսզի փոխանցէ վարչութեան խօսքը: Եղբայրը իր խօսքին մէջ ըսաւ. «25 տարիներ առաջ, հետզհետէ ուճացող Քոլեկթի հայրութեան համար, անհրաժեշտութիւն զգացուեցաւ







հիմնել Հ.Մ.Ը.Մ-ի Քուէյթի մասնաճիւղը, որպէսզի իր հովանիին տակ առնէ բոլոր մատաղ հոգիները անխտիր՝ չզրկելով զիրենք այդ շարժումին մարդկային ու ազգային արժէքներէն: Արժէքներ, որոնց համար ծնունդ առաւ այս գեղեցիկ շարժումը 90 տարի առաջ: Շարժում կ'ըսենք, որովհետեւ անհրաժեշտութեան ու կարիքի արդիւնք էր, ժողովրդային պահանջ էր: Այդ ժամանակներուն ժողովրդային ինքնաբերական ճեղքով յառաջացած սկաուտական ու մարզական խումբերու եւ խմբակներու կեդրոնացման աշխատանքները պիտի ստեղծէին ու ստեղծեցին Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնը»: Ապա, ան իր խօսքը աւարտեց ըսելով՝ «Մեզի վիճակուած է այսօր այս մատաղ սերունդին ծառայելու եւ առաջնորդելու ծանր, բայց քաղցր բեռը: Սակայն պարտք կը զգանք շնորհակալութիւն յայտնելու Քուէյթի մէջ Հ.Մ.Ը.Մ-ի մասնաճիւղի հիմնադիրներուն, բոլոր վարչականներուն, պատասխանատուներուն եւ վաստակաշատ ու համեստ քոյրերուն եւ եղբայրներուն, որոնք իրենց ծառայութեան բաժինը բերած են սերունդներու դաստիարակութեան»:

Այնուհետեւ կիրարկուեցաւ գեղարուեստական ճոխ յայտագիր, կատարողութեամբ՝ մասնաճիւղին քոյրերուն եւ եղբայրներուն: Երկու մասով հանդիսատեսին ներկայացուեցաւ Հ.Մ.Ը.Մ-ի Քուէյթի մասնաճիւղին 25 տարիներու հարուստ պատմութիւնը՝ խտասալիկով, ինչ որ մեծ յուզում եւ հպարտութիւն փոխանցեց ներկաներուն: Հարկ է յիշել, որ այդ շքեղ պատրաստութիւնը վստահուած էր Արագ Պաղճեանին եւ Ռաֆֆի Թոքմաքճեանին:

Ձեռնարկին ուշագրաւ մէկ մասը եղաւ խումբերու փոխանցումը, խոստման արարողութիւնը եւ աստիճանատու չութիւնը, որ գաղութին մէջ միշտ ստեղծած է խանդավառութեան բարձր ալիք: Օրուան կնքահայրերն էին Արտակ Քհնյ-Քէհեայեան, քոյրեր Ռուզաննա Նազարեան, Գարմէն Դանիէլեան եւ Վարդուկ Գազէլեան: Բեմ բարձրացան խումբ մը հաւատաւոր եղբայրներ եւ քոյրեր, որոնք ստացան համապատասխան աստիճաններ՝ վերանորոգելով իրենց երգումը: Տեղի ունեցաւ նաեւ պարգեւատրում:

Յաջորդեց օրուան խորհուրդին փոխանցումը: Բեմ բարձրացաւ օրուան բանախօս եղբ. Ժան Պէպէճեան եւ ներկայացուց Հ.Մ.Ը.Մ-ի հիմնադրութեան 90ամեակի խորհուրդը: Եղբայր Պէպէճեան, իբրեւ բազմավաստակ Հ.Մ.Ը.Մ-ական, իր խօսքին մէջ ըսաւ, որ «Երկիրներ, ազգեր եւ պետութիւններ չեն կրնար յառաջդիմել ու զարգանալ միայն անցեալի իրենց փառքի պատմութիւնը երգելով կամ ապագայի նկատմամբ երազներ հիւսելով: 1915ին, հայոց պատմութեան ամէնէն դաժան եւ մռայլ ժամանակաշրջանին, երիտասարդութեան համատարած հոգեկան քանդուած միջնորոտէն ծնաւ թանկագին եւ սքանչելի խմբակ մը, բաղկացած մարմնակրթութեան ուսուցիչ Շաւարշ Քրիսեանէ, դաստիարակ եւ դպրոցի տնօրէն Յովհաննէս Հինդլեանէ եւ ազգային մարզիչ Գրիգոր Յակոբեանէ, որոնք 1918ին որոշեցին հիմնել Հայ Մարմնակրթութեան Ընդհանուր Միութիւնը՝ Պոլսոյ մէջ: Ապա, ան շարունակեց իր խօսքը եւ ըսաւ, որ «Հ.Մ.Ը.Մ-ը երբեք պէտք չէ դիտել իբրեւ սոսկ մարզական կամ սկաուտական միութիւն, այլ՝ ֆիզիքապէս առողջ եւ զօրաւոր հայ երիտասարդութեան դարբնոց՝ ազգային ու բարոյական բարձր արժէքներով լիցքաւորուած»:

«Հ.Մ.Ը.Մ-ի գաղափարախօսութիւնը պարզ է ու խորիմաց: Այնտեղ տարբեր կազմակերպութիւններու ընտրած բարդ աշխարհահայեացքները գոյութիւն չունին, ինչպէս մարդ անհատի ծագումն ու զարգացումը:

«...Հ.Մ.Ը.Մ-ի ամբողջ դաւանանքը կամ հաւատոյ հանգանակը կարելի է խտացած կերպով գտնել իր «Բարձրացի՛ր՝ բարձրացուր» նշանաբանին մէջ, որուն մէջ կը գտնենք մարդկային բարոյական արժէքներ ու առաքինութիւններ» (խօսքին ամբողջութիւնը տեսնել էջ 6-8):

Ձեռնարկը իր աւարտին հասաւ գաղութի հոգեւոր հովիւ Արտակ Քհնյ-Քէհեայեանի սկաուտներուն ուղղուած խրատական խօսքերով եւ «Պահպանիչ»ով:

Հուսկ, շեփորախումբը հնչեցուց «Ո՛վ Հայ Արի»ն եւ յեղափոխաշունչ կարգ մը կտորներ:





# ԼԱԹԱՔԻՈՅ ՀԱՅՈՒԹԻՒՆԸ ՏՕՆԱԽՄԲՈՒԹԵԱՄԲ ՄԸ ՆՇԵՑ Հ.Մ.Ը.Մ.Ի ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ 90ԱՄԵԱԿԸ

## Հուրի Գարամարտեան ԼԱԹԱՔԻԱ

**Լ**աթաքիոյ հայու-  
թիւնը Հ.Մ.Ը.Մ.ի  
հիմնադրութեան  
90ամեակը մեծա-  
շուք տօնախմբ-  
ութեամբ մը նշեց 28 Նոյեմ-  
բեր 2008ին, շրջանի ՍՕԽի  
սրահին մէջ: Ներկայ էին  
Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ Շրջանա-  
յին Վարչութեան ատենապետ  
եղբ. Բաֆֆի Տէր Աբրահամ-  
եան, եղբայրներ Արմէն Քէօզ-  
կէրեան եւ Յարօ Տէրմէնճ-  
եան, Լաթաքիոյ հոգեւոր հո-  
վիւ Գառնիկ Քհնյ. Զափան-  
եան, Գաւառական Ժողովի  
անդամ Պօղոս Ղազարեան,  
շրջանի միութիւններու ներկայացու-  
ցիչներ, ինչպէս նաեւ երէց եւ երիտա-



Յիշատակի Եկար՝  
90ամեակի  
կարկանդակը  
հատելէ առաջ:

սարդ Հ.Մ.Ը.Մ.ականներ իրենց ընտա-  
նիքներով:  
Տօնախմբութեան բացման խօսքը

կատարեց վարչական քոյր Անոյշ Խա-  
լոյեան: Ան ըսաւ. «Հ.Մ.Ը.Մ.ին պատկա-  
նիրը մասնաւոր զգացում մըն է, որ մեզ  
կը մղէ յաւելեալ նուիրումով ծառայե-  
լու Սփիւռքին եւ հայրենիքին»:

Ապա, մասնաճիւղին խօսքը փոխան-  
ցեց վարչութեան ատենապետ եղբ. Յա-  
րութ Գաբրիէլեան: Ան յայտնեց, որ  
Հ.Մ.Ը.Մ.ի 90ամեակին առիթով անգամ  
մը եւս մեր ուխտը կը վերանորոգենք  
հայրենիքի բարգաւաճման, Հայ Դատի  
հետապնդման եւ հայկական արժէքնե-  
րու պահպանման համար:

Հալէպէն ժամանած երգիչներ Գօգօ  
Թիւթիւնճեանի եւ Մինաս Քիլէնճեանի  
ճոխ յայտագիրով ներկաներու խանդա-  
վառութիւնը հասաւ իր գագաթնակէ-  
տին:

Այնուհետեւ, ատենապետ եղբ. Յա-



94ամեայ քոյր Ռերբրա Լոշիկեան  
մասնաճիւղի վարչութեան  
կը ստանձնէ իր գնահատագիրը:





րուծ Գարրիչլեան բեմ հրաւիրեց 29 վեթերաններ պատուոյ գնահատագիրներ ստանալու համար:

Վեթերան քոյրերն ու եղբայրները Հ.Մ.Ը.Մ.ի Լաթաքիոյ մասնաճիւղին տուած են իրենց լաւագոյնը՝ վարչական, մարզական, սկաուտական եւ այլ մարզերու մէջ: Իրենց զոհողութեամբ, պարտականութեան գիտակցութեամբ եւ անձնուիրութեամբ անոնք օրինակ հանդիսացած են յաջորդական սերունդներու եւ միութեան ջանք փոխանցած են «Բարձրացիր-բարձրացուր» նշանաբանով:

Թնդացող ծափահարութիւններով բեմ բարձրացաւ նաեւ մասնաճիւղին ֆուլթայոյի խումբը, մարզիչ եղբ. Մովսէս Կարապետեանի գլխաւորութեամբ: Խումբը գնահատուեցաւ մարզական նոր տարազներով, տրուած ըլլալով որ Լաթաքիոյ միջ-սկաուտական ջոկատներու անցեալ տարուան ֆուլթայոյի մրցաշարքին ան գրաւեց երրորդ դիրքը, հակառակ սեփական մարզադաշտի չգո-

յութեան:

Հպարտութեան եւ հոգեկան ներշնչման ալիքը ողողեց ներկաներու սրտերը, երբ միութեան տարեց անդամները հատեցին Հ.Մ.Ը.Մ.ի 90ամեակի խորհրդանկարը կրող կարկանդակը:



Տօնախմբութեան Սուրիոյ Շրջանային Վարչութեան պատգամը փոխանցեց ատենապետ եղբ. Բաֆֆի Տէր Աբրահամեան: Ան 90ամեակի առիթով շնորհաւորեց բոլոր քոյրերն ու եղբայրները, խօսեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի իտէալներուն, խորհուրդին եւ յաղթական երթին մասին եւ շեշտեց, որ Հ.Մ.Ը.Մ.ը միշտ հաւատարիմ կը մնայ իր նշանաբանին եւ պարտականութեան գիտակից՝ Սփիւռքի եւ հայրենիքի մէջ:

Տօնախմբութիւնը շարունակուեցաւ ջերմ մթնոլորտի մէջ: Հայկական ճոխ երգերը խանդավառեցին ներկաները, մինչեւ որ բաժնուեցան օրուան յուշանուէրները՝ Հ.Մ.Ը.Մ.ի նշանակը կրող, Արարատի եւ հայոց հողին փառքը գովաբանող կարմիր գինիի պատկերա-

զարդուած շիշեր:

90ամեակի պարգեւատրման արարողութիւնը շարունակուեցաւ յաջորդող օրերուն, երբ մասնաճիւղին վարչութիւնը այցելեց տօնախմբութենէն բացակայած վեթերաններու տունները եւ անձամբ յանձնեց գնահատագիրները, իր սրտի խօսքը փոխանցելով անոնց վաստակաշատ աշխատանքին համար:

Խորհրդաւոր եւ յիշատակելի եղաւ այն պահը, երբ շրջանի երիցագոյն Հ.Մ.Ը.Մ.ականը՝ 94ամեայ քոյր Ռեբեքա Լոշիկեան յուզումով եւ արցունքով ստանձնեց իր գնահատագիրը եւ իր դողդոջուն ձեռքերով, այրի կնոջ լուծային օրինակով, նիւթական օժանդակութիւնը բերաւ իր պաշտելի միութեան՝ Հ.Մ.Ը.Մ.ին:



- Full of Charme Hotel, New Construction, French Architecture, International Standards, 100 m from the Republic Square and 15 minutes from the Yerevan International Airport.
- 44 Rooms and 3 Suites with all comforts, all climate controled, minibar, shower or bathroom with private WC, hairdryer. Satellite TV, international direct dial phone. Internet & Email access.
- Individualized and personal service, 24 hour reception and room service
- Bar



Feel at home, away from home...

Reservations Yerevan 32-38, Hanrabadoutian Street, Yerevan 375010, Armenia Tel 374 10 54 60 60 • Fax 374 10 54 60 50 sales@europehotel.am

www.europehotel.am



# Հ.Մ.Ը.Մ.Ի ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ 90ԱՄԵԱԿԻ ՓԱՌԱՇՈՒՔ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ ԴԱՄԱՍԿՈՍԻ ՄԷՋ

Սօսի քիւրտեան  
ԴԱՄԱՍԿՈՍ

21

Նոյեմբեր 2008ը երկար ատեն պիտի մնայ Դամասկոսի հայութեան յիշողութեան մէջ, որովհետեւ այդ օր Հ.Մ.Ը.Մ.Ի Դամասկոսի մասնաճիւղի վարչութիւնը փառաշուք տօնակատարութեամբ մը նշեց միութեան 90ամեակը, այս առիթով փաստը տալով Դամասկոսի հայութեան վայելած քաղաքական վարկին ու կշիռին:

Արդարեւ, իր նախընթացը չունեցող այս տօնակատարութեան ներկայ գտնուեցան Հայաստանի Հանրապետութեան արտակարգ դեսպան Արշակ Փօլատեան, Հ.Մ.Ը.Մ.Ի Սուրիոյ Շրջանային Վարչութեան անդամ եղբայրներ Արմէն Քէօզկէրեան եւ Սարգիս Պասմաճեան, մասնաճիւղի վարչութեան եւ

Սկառու. Խորհուրդի ատենապետներ, միութիւններու ներկայացուցիչներ եւ մեծ թիւով ժողովուրդ:

Տօնակատարութեան բացումը կատարեց եղբ. Բաֆֆի Սրապեան: Ան ողջունեց ներկաները եւ հրաւիրեց վարչութեան ատենապետը՝ փոխանցելու բացման խօսքը: Յաջորդեց գեղարուեստական յայտագիրը: Քոյրեր Սառա Ղատղնեան եւ Մէյրի Տէմիրճեան յաջորդաբար ներկայացուցին երկու արտասանութիւններ: Ապա, քոյր Սօսի Քիւրտեան ընթերցեց Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան խօսքը, հրապարակուած՝ միութեան 90ամեակին առիթով: Խօսքէն ետք, արի-արծուիկ-գայլիկներ ներկայացուցին հինգ բուրգեր:

Այնուհետեւ բեմ հրաւիրուեցաւ օրւան դասախօս եղբ. Նշան Օղիկեան: Եղբայրը ողջունեց Հ.Մ.Ը.Մ.Ի պայծառ ներկան եւ մաղթեց, որ ապագային դարձեալ առիթը ստեղծուի նոր տասնամեակներու նորանոր յաջողութիւն-



ներ միասնաբար տօնելու:

Հասաւ պարգեւատրումի պահը եւ բեմ ներկայացան հինգ քոյր-եղբայրներ «Ծառայութեան» շքանշաններ ստանալու Շրջանային Վարչութեան ներկայացուցիչ եղբայրներու եւ մասնաճիւղի ատենապետին ձեռամբ: Այս առիթով շքանշանի արժանացան քոյր Աստղիկ Մաժունեան, եղբայրներ Գեղամ Ճրրիւեան, Զաւէն Տէր Յակոբեան, Սարգիս Սանոսեան եւ Կարօ Ճունտուրեան: Օրւան բանախօսին տրուեցաւ 90ամեակի յատուկ յուշանուէր:

Տօնակատարութեան փակումը կատարեց մասնաճիւղին նորակազմ շեփորախումբը՝ «Յառաջ նահատակ» քայլերգով:

## 90ԱՄԵԱԿԻ ՃԱՇԿԵՐՈՅԹԸ

90ամեակի փառաշուք տօնակատարութեան կողքին, մասնաճիւղին վարչութիւնն ու 90ամեակի յանձնախումբը կազմակերպեցին ճաշկերոյթ մը, որ տեղի ունեցաւ Ազգային համալիրի դաշ-



Սրբաշարքին մասնակից խումբերը իրենց բաժակներով:





տին վրայ:

Դաշտը լեցուած էր Հ.Մ.Ը.Մ-ի բարեկամներով, համակիրներով եւ անշուշտ միութենականներով, աւելի քան 450 հոգի:

Օրուան բարի գալուստի խօսքը փոխանցեց 90ամեակի յանձնախումբի ատենապետ եղբ. Պօղոս Խաճարեան: Ան բարձր գնահատեց Հ.Մ.Ը.Մ-ի աւանդը հայապահպանման գործին մէջ եւ շեշտեց, որ Հ.Մ.Ը.Մ. միշտ կարիքը ունի իր համակիրներուն աջակցութեան: Ապա բեմ հրաւիրուեցաւ ճաշկերոյթը հովանաւորող եղբ. Կարօ Ճունտուրեան, որ պէսզի ստանայ 90ամեակի իր յուշանուէրը եւ փոխանցէ սրտի խօսքը: Եղբայրը շնորհակալութիւն յայտնեց վարչութեան եւ յանձնախումբին, որոնք ոչ մէկ ճիգ կը խնայեն Հ.Մ.Ը.Մ-ի ջանք վառ պահելու համար այսօր եւ վաղը:

Ապա, օրուան երգիչ Մամբրէ Սիմոնեան ճոխացուց ճաշկերոյթին մթնոլորտը:

Նուագի եւ պարի մթնոլորտին մէջ, ազգային-յեղափոխական երգերով գի-

նովցած՝ ներկաները երեկոն լուսցուցին միասնաբար:

**...ԵՒ ՄԻՋ ՄԱՄՆԱՃԻՒՂԱՅԻՆ ՊԱՍՔԵԹՊՈԼԻ ՄՐՑԱՇԱՐՔԸ**

90ամեակի տօնակատարութիւնները ընդգրկեցին նաեւ պասքեթպոլի միջմասնաճիւղային խաղեր, կազմակերպութեամբ մասնաճիւղին վարչութեան եւ 90ամեակի յանձնախումբին:

Մրցաշարքին իրենց մասնակցութիւնը բերին Հ.Մ.Ը.Մ-ի Հալէպի, Գամիշլիի եւ Դամասկոսի մասնաճիւղերը: Բացման պաշտօնական արարողութիւնը տեղի ունեցաւ Ազգային համալիրի պասքեթպոլի մարզադաշտին վրայ:

Վարչութեան ատենապետը բարի գալուստ մաղթեց մարզիկներուն եւ մթնոլորտը խանդավառեց քաջալերական խօսքերով:

Խաղերը կատարուեցան հետեւեալ ձեւով.- Դամասկոս-Գամիշլի, Գամիշլի-Հալէպ: Կէսօրուան ճաշի դադարէն ետք

մրցումները շարունակուեցան Դամասկոսի կրտսերներուն եւ արաբական խումբի մը դէմ: Ապա, տեղի ունեցաւ մրցաշարքի աւարտական մրցումը, որ իրարու դէմ հանեց Հալէպի եւ Դամասկոսի խումբերը: Մրցումը աւարտեցաւ Հալէպի մասնաճիւղի յաղթանակով: Այս առիթով, մասնաճիւղին վարչութիւնը մասնակից բոլոր խումբերուն յանձնեց 90ամեակի յատուկ յուշանուէրներ: Մրցաշարքի աւարտին, ելոյթ ունեցաւ մասնաճիւղին շեփորախումբը:

Երեկոյեան, հիւրընկալ մասնաճիւղին վարչութիւնը հիւրասիրութիւն մը կազմակերպեց ի պատիւ մրցաշարքին մասնակից մարզիկներուն: Այս առիթով խօսքեր արտասանեցին Հ.Մ.Ը.Մ-ի Սուրիոյ Շրջանային Վարչութեան անդամ եղբ. Մովսէս Քէօշկէրեան եւ մասնաճիւղի ատենապետ եղբ. Աւօ Աճէմեան:



*Hratch and Neshan Boyadjian*

Tel.: + 961-1-249554 Cell : + 961-3-882812/ + 961-3-882811  
Fax: +961-1-248556 Bourj Hammoud - Beirut - Lebanon  
Sector 4. 98th st. Bldg. #246 GF

E-mail: Hratch@goldenmountains.com Hratchboy@hotmail.com

<http://www.goldenmountains.com>



# 90ԱՄԵԱԿԻ ՄԵԾԱՇՈՒՔ

## ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՄՆ ՔԱՄԻՇՆԻ ՄԷՋ

Մարալ Կենճոյեան  
ԳԱՄԻՇՆԻ

# 23

Նոյեմբեր 2008ի, Հ.Մ.Ը.Մ-ի Գամիշլի մասնաճիւղի վարչութեան եւ ըսկաուտ. Խորհուրդին նախաձեռնութեամբ, շրջանի «Կիւլպէնկեան» սրահին մէջ տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ-ի հիմնադրութեան 90ամեակի մեծաշուք հանդիսութիւն, որուն ներկայ գտնուեցան Գամիշլիի Ս. Յակոբ եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Յակոբ Քհնյ. Մելքոնեան, Եզնիկ Քհնյ. Զղջանեան, Հ.Մ.Ը.Մ-ի Սուրբոյ Շրջանային Վարչութեան անդամ եղբ. Արմէն Քէօզկէրեան, ազգային մարմիններու ներկայացուցիչներ, երէց Հ.Մ.Ը.Մ.ականներ, ծնողներ եւ համակիրներու հոծ բազմութիւն մը:



Օրուան հանդիսավար քոյր Մարալ Կենճոյեան բացուած յայտարարեց հանդիսութիւնը եւ ներկաները հրաւիրեց մէկ վայրկեան յոտնկայս լուծեամբ յարգելու յիշատակը յաւէտ բաժնուած Հ.Մ.Ը.Մ.ականներուն: Ապա, շեփորախումբը նուագեց Սուրբոյ եւ Հայաստանի քայլերգները: Բացման խօսքը արտասանեց քոյր Շուշիկ Շառոյեան: Ան անդրադարձաւ Հ.Մ.Ը.Մ-ի 90ամեայ վաստակին, շեշտելով որ Հ.Մ.Ը.Մ-ը իր հիմնադրութեան օրէն եղաւ այն ընտանիքը, այն հարազատ տունը, ուր սէրը, հաւատքը, ծառայութիւնը, նուիրումը եւ յարգանքը միութեան անդամները քոյրերու եւ եղբայրներու վերածեց:

Բացման խօսքէն ետք, եղբ. Նարեկ Մելքոնեան մեներգեց «Քարերի ամրոց երկիր Հայաստան» երգը: Ապա, խումբ

մը արի-արենոյններ ներկայացուցին չափական մարզանքներ:

Գեղարուեստական յայտագրով եղբ. Վարդան Մուրատեան ասմունքեց Արմէն Անոյշի «Քառասնամեակ» բանաստեղծութիւնը:

Օրուան պատգամը փոխանցեց մասնաճիւղի ատենապետ քոյր Սիլվա Յովհաննէսեան: Ան իր խօսքին մէջ ըսաւ. «Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնը ծնունդ առաւ հայոց պատմութեան ամէնէն դժուարին օրերուն: Օսմանեան սահմանադրութենէն ետք, երբ հայ երիտասարդութիւնը սկսաւ շունչ առնել Պոլսոյ մէջ, հետզհետէ սկսան կազմակերպուիլ մարզական միութիւններ եւ անհրաժեշտութիւնը ծագեցաւ անհատական ճիգերը համախմբելու եւ հաւաքական աշխատանքով իրականացնելու վաղուան սերունդին Ֆիզիքական եւ հոգեկան դաստիարակութեան գործը:

«1918ի Նոյեմբերին, Պոլսոյ մէջ հիմը դրուեցաւ Հ.Մ.Ը.Մ-ին, որպէսզի հա-

մախմբէ երիտասարդութիւնը, անոր հայեացքը ուղղէ դէպի հայրենիք, անոր հոգին ու մարմինը դաստիարակէ «Առողջ միտք, առողջ մարմնի մէջ» նշանաբանով եւ ազգային առողջ գաղափարախօսութեամբ:

«Հ.Մ.Ը.Մ-ի ընտանեկան հարազատ միջնորդութիւն մէջ 90 տարի շարունակ հայ մանուկին եւ երիտասարդին համար բիւրեղացաւ հայ սկաուտին վսեմ դիմագիծը, վերականգնեցաւ բարձր ճակատով արժանապատիւ հայր, որ գիտակից յանձնառութեամբ դիմագրաւեց հայ կեանքի այլասերիչ բոլոր հոսանքները»:

Շարունակելով, պատգամախօս քոյրը հաստատեց, որ «Հ.Մ.Ը.Մ-ը հայ կեանքի մէջ իր պատուաւոր տեղը ունի ոչ միայն իր 100 մասնաճիւղերով եւ 26 հազար անդամներու պատկառելի թիւով, կազմակերպչական մեծ կառոյցով, նիւթական եւ բարոյական տարածուն գործունէութեամբ, այլեւ՝ անոնց ընդմէջէն տարած իր հայանուէր աշխա-





տանքներով: Աշխատանքներ, որոնք կենսունակ եւ առողջ կը պահեն հայ նոր սերունդները, զանոնք կը մեծցնեն ազգային արժանապատուութեան զգացումով եւ մարմնակրթութեան գործը կը դարձնեն նուիրական առաքելութիւն՝ ծառայելու համար մեր հաւաքական կեանքի ամրապնդման»:

Օրուան պատգամէն ետք ելոյթ ունեցաւ Համազգայինի «Աւետիս Ահարոնեան» մասնաճիւղին «Վանայ» պարտիսումը՝ «Քոչարի» եւ «Շարխուշտա» պարերով:

Սկսուտական երգչախումբը հանդէս եկաւ ազգային շարք մը երգերով, երգեհոնի ընկերակցութեամբ եղբ. Տիգրան Յովհաննէսեանի:

Հանդիսութեան աւարտին հանդիսավարը բեմ հրաւիրեց Հ.Մ.Ը.Մ-ի Սուրիոյ Շրջանային Վարչութեան ներկայացուցիչ եղբ. Արմէն Քէօզկէրեանը՝ փոխանցելու Շրջանային Վարչութեան խօսքը, ապա յետ մահու «Ծառայութեան» շքանշանի տուչութիւն կատարելու մասնաճիւղի վաստակաշատ նուիրեալներէն եղբ. Իսրայէլ Մելքոնեանի:

Այնուհետեւ, դարձեալ բեմ հրաւիրուեցան մասնաճիւղի վարչութեան ատենապետ քոյր Սիլվա Յովհաննէսեան, մասնաճիւղին մօտ Շրջանային

Վարչութեան ներկայացուցիչ եղբ. Մկրտիչ Գրիգորեան եւ եղբ. Իսրայէլ Մելքոնեանի զաւակը՝ եղբ. Աբիկ Մելքոնեան:

Եղբ. Քէօզկէրեան ամփոփ ձեւով ներկայացուց եղբ. Իսրայէլ Մելքոնեանի կենսագրականը, նշելով որ ան երկար տարիներ ծառայած է Հ.Մ.Ը.Մ-ի ընտանիքին: Եղած է գայլիկ, տիպար սկառուտ, մասնաճիւղի խմբապետ եւ մասնաճիւղի վարչութեան ատենապետ: Կենսագրական գիծերու ներկայացումէն ետք, Հ.Մ.Ը.Մ-ի 90ամեակի յատուկ գնահատագիր եւ «Ծառայութեան» շքանշան յանձնուեցաւ եղբ. Աբիկ Մելքոնեանին:

Հանդիսութիւնը վերջ գտաւ Հ.Մ.Ը.Մ-ի «Յառաջ նահատակ» քայլերգով:

**90ԱՄԵԱԿԻ ԱՌԻԹՈՎ ՊԱՍՔԵԹՊՈՒԻ ԵՒ ՖՈՒԹՊԱԼԻ ՆԵՐՔԻՆ ՄՐՅԱՇԱՐՔ**

Հ.Մ.Ը.Մ-ի 90ամեակի տօնակատարութիւններու շարքին, Գամիշլիի մասնաճիւղը կազմակերպեց նաեւ պասքեթպոլի եւ ֆուտպոլի ներքին մրցաշարք մը, որ տեղի ունեցաւ 90ամեակի հանդիսութեան առաւօտեան, շրջանի մանկապարտէզի շրջափակէն ներս, ներկայու-

թեամբ վարչութեան մարզական պատասխանատուին, յանձնախումբի անդամներուն եւ ժողովուրդի հոծ բազմութեան մը:

Հ.Մ.Ը.Մ-ական հարազատ միջնորդի մէջ կատարուած մրցաշարքին մասնակցեցան մասնաճիւղին ֆուտպոլի նորագիրներու, կրտսերներու, պատանեկան եւ երիտասարդական խումբերը:

Մրցաշարքը աւարտեցաւ «Մասիս» խումբին յաղթանակով: Խումբը հանդիսացաւ առաջին, պարգեւատրուեցաւ եւ արժանացաւ յատուկ բաժակի:

Ստորեւ՝ խաղերուն արդիւնքները.  
**ՆՈՐԱԳԻՐՆԵՐ**  
«Մասիս»-«Շիրակ» 5-4

**ԿՐՏՍԵՐՆԵՐ**  
«Մասիս»-«Անի» 6-3

**ՊԱՏԱՆԻՆԵՐ**  
«Մասիս»-«Տարօն» 6-5

**ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐ**  
«Մասիս»-«Վան» 5-3

Պասքեթպոլի մրցումներուն, «Մասիս» խաղաց «Արարատ» խումբին դէմ (42-27) եւ արժանացաւ բաժակին:

**ՖՈՒԹՊՈՒԻ ՄԻՋ-ՄԱՍՆԱՃԻԻՂԱՅԻՆ ՄՐՅԱՇԱՐՔ՝ ԳԱՄԻՇԼԻԻ ՄԷՋ**



**Րաֆֆի Սիւլահեան  
ՀԱԼԷՊ**

Հ.Մ.Ը.Մ-ի Սուրիոյ Շրջանային Վարչութիւնը Գամիշլիի մէջ կազմակերպեց ֆուտպոլի մրցաշարք մը, որուն իրենց մասնակցութիւնը բերին Սուրիոյ հինգ մասնաճիւղերը՝ Գամիշլի, Դամասկոս, Լաթաքիա, Քեսապ եւ Հալէպ: Վերջինը մասնակցեցաւ երկու խումբով (սկսուտական եւ մարզական կազմերով):

Մասնակից խումբերու տողանցքէն ետք, մրցաշարքը բացուած յայտարարուեցաւ «Յառաջ նահատակ»



տակ» քայլերգով: Ապա, Սուրբիոյ Շրջանային Վարչութեան անդամ եղբ. Արմէն Քէօշկէրեան բարի գալուստ մաղթեց ներկաներուն: Ան իր խօսքին մէջ ըսաւ, որ Հ.Մ.Ը.Մ.ը աշխարհատարած իր 100 մասնաճիւղերով պատրաստած է այնպիսի սերունդներ, որոնք միշտ բարձր պահած են միութեան վարկն ու անունը: Հ.Մ.Ը.Մ.ական մարզիկը, շարունակեց ան, միշտ կարողացած է ինքզինք փաստել իբրեւ առողջ եւ տիպար մարզիկ:



Եղբոր խօսքէն ետք, մասնակից խումբերը բաժնուեցան երկու խմբակի: Առաջին խմբակին մաս կազմեցին Հալէպի սկաուտական, Լաթաքիոյ եւ Դամասկոսի խումբերը, իսկ երկրորդ խմբակին՝ Հալէպի մարզական, Գամիշլիի եւ Քեսապի խումբերը:

Առաջին խմբակին աղիւսակը գլխաւորեց Հալէպի սկաուտական խումբը՝ յաղթելով Լաթաքիոյ (9-2) եւ Դամասկոսի (3-1): Երկրորդ դիրքը գրաւեց Լաթաքիան՝ 3-1 արդիւնքով պարտութեան մատնելով Դամասկոսի կազմը: Բ. խմբակին առաջին դիրքը գրաւեց Հալէպի մարզական խումբը: Ան յաղթեց Գամիշլիի եւ Քեսապի խումբերուն (4-2 եւ 9-3 արդիւնք-

ներով):

Աւարտական մրցումը իրարու դէմ հանեց Հալէպի զոյգ կազմերը: Մրցումը վերջ գտաւ մարզական խումբին յաղթանակով՝ 2-1 արդիւնքով: Երրորդ դիրքը գրաւեց Լաթաքիոյ խումբը:

Մրցաշարքի աւարտին տեղի ունեցաւ բաժակներու տուչութիւն: Եղբ. Արմէն Քէօշկէրեան առաջին հերթին գնահատեց Գամիշլիի մասնաճիւղի վարչութեան տարած բրձախնդիր աշխատանքը, նոյնպէս՝

հինգ մասնաճիւղերու մասնակցութիւնը, ինչ որ յատուկ փայլք տուաւ մրցաշարքին յաջողութեան: Ան իր խօսքին մէջ շնորհաւորեց բոլոր մարզիկները՝ մաղթելով առողջութիւն եւ աշխատանքի անսպառ եռանդ, որպէսզի նոյն խանդավառութեամբ քայլեն Հ.Մ.Ը.Մ.ի յաղթական ճանապարհէն:

Մրցաշարքին առընթեր, Հ.Մ.Ը.Մ.ի Սուրբիոյ Շրջանային Վարչութիւնը Գամիշլիի վարչութեան հետ կատարեց հանդիպում մը, ուր քննարկուեցաւ մասնաճիւղը հետաքրքրող հարցեր: Կատարուեցաւ նաեւ Շրջանային Վարչութեան լիազօմար ժողով:

The Champs Élysées just steps away and the Parc Monceau nearby


HOTEL



PAVILLON MONCEAU  
PARIS

Full of charme,  
Tastefully decorated 36 rooms  
and 6 suites with individual  
heating / air conditioning,  
direct access telephone line,  
internet connection, minibar,  
safety box and satellite TV.  
Private bathroom with hairdryer.  
The suites can accommodate  
3 adults or a family  
with parents and 2 children.

PAVILLON MONCEAU



43 rue Jouffroy d'Abbans 75017 Paris  
Tel 331 56 79 25 00 - Fax 331 42 12 99 38

infos@pavillon-monceau.com  
www.pavillon-monceau.com





# ԻՐԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՊԱՏԳԱՄԱԲՈՐ ԳԷՈՐԳ ՎԱՐԴԱՆԵԱՆ ԱՅՑԵԼԵՑ Հ.Մ.Ը.Մ.Ի «ԱՐԱՐԱՏ» ՄԱՍՆԱԾԻՒՂ

Մարո Քէշիշեան  
ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍ

**Ի**րանի խորհրդարանի պատգամաւոր Գեորգ Վարդանեան, Մ. Նահանգներ կատարած իր այցելութեան ծիրին մէջ, 23 Փետրուար 2009ի երեկոյեան այցելեց Հ.Մ.Ը.Մ.ի Կլէնտէյլի «Արարատ» մասնաճիւղի կեդրոն եւ մօտէն ծանօթացաւ մասնաճիւղին տարած ազգանպաստ գործունէութեան: Պատգամաւորին կ'ընկերակցէր Հ.Յ.Դ. Արեւմտեան Մ. Նահանգներու կեդրոնական Կոմիտէի անդամ Յարութ Մանուկեան: Պատգամաւորը ղիմաւորելու եկած էին Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Միացեալ Նահանգներու Շրջանային Վարչութեան անդամներ քոյր Մարո Քէշիշեան եւ եղբ. Խաչիկ Խալաթեան:

Հիւր պատգամաւորը հիւրընկալուեցաւ մասնաճիւղին վարչութեան եւ կեդրոնի վարիչ տնօրէն Արմանտ Կորկորեանի կողմէ:



Վարդանեան (աջին) յուշանուէր կը յանձնէ մասնաճիւղի ատենապետ եղբ. Գառնիկ Արախամեանին:

պուլթիւններուն վրայ, եւ քաջալերեց մասնաճիւղը գործակցելու Իրանի կազմակերպութիւններուն հետ փոխադարձ այցելութիւններով: Պատգամաւորը վստահեցուց, որ իրանահայ գաղութը հօր է եւ յարգանքը կը վայելէ Իրանի պետութեան եւ ժողովուրդին, ինչպէս նաեւ կապուած է իր հայրենիքին:

Շահեկան այս հանդիպման վերջին բաժինով եղան յուշանուէրներու փոխանակումներ:

Նախքան մեկնումը, պատգամաւոր Վարդանեան շրջեցաւ «Արարատ»ի կեդրոնը, հետեւեցաւ կեդրոնի մարզադաշտերուն վրայ կատարուող մարզական փորձերուն, ընթացող ժողովներուն եւ մեծապէս տպաւորուած հրաժեշտ առաւ:



Իրանի խորհրդարանի պատգամաւոր Գեորգ Վարդանեան Հ.Մ.Ը.Մ.ի «Արարատ» մասնաճիւղի վարչութեան եւ Շրջանային Վարչութեան ներկայացուցիչներուն հետ:





# «ԱՆՑԵԱՎՈՎ ԿԵՐՏԵՆՔ ՄԵՐ ԱՊԱԳԱՆ» ԿԱՐԳԱԽՕՍՈՎ ՀԱՄԱԽԱՄԲՈՒՄ՝ Հ.Մ.Ը.Մ.Ի ԱՐԵՒՄՏԵԱՆ Մ. ՆԱՀԱՆՔՆԵՐՈՒ ԱՆՑԵԱԿԻ ԵՒ ՆԵՐԿԱՅԻ ԽՄԲԱՊԵՏ-ԽՄԲԱՊԵՏՈՒՀԻՆԵՐՈՒ

Մարտ Բեչիշեան  
ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍ

**Ո**ւրբաթ, 23 Յունուար 2009ի երեկոյեան, Հ.Մ.Ը.Մ.Ի Արեւմտեան Մ. Նահանգներու Շրջանային Վարչութեան հրաւերով, Հայ Օգնութեան Միութեան կեդրոն համախմբուած էին շրջանի անցեալի եւ ներկայի սկաուտ խմբապետ-խմբապետուհիները: Անոնք ընդառաջած էին իրենց ուղղուած հրաւերին, որպէսզի անցեալի իրենց գեղեցիկ յուշերը վերապրին եւ հպարտանան այժմու սկաուտ ղեկավարներով, որոնց պատրաստութեան մէջ իրենց արդար բաժինը բերած են: Հոն էին նաեւ մօտակայ մասնաճիւղերու ներկայ սկաուտ պատասխանատուներն ու վարչութիւններու ներկայացուցիչները: Ուրախալի էր երեւոյթը, յուսադրիչ էր նախաձեռնութիւնը:

Երեկոյին հանդիսավարութիւնը կատարեց Շրջանային Վարչութեան ըսկաուտականի ներկայացուցիչ եղբ. Փիէր Մանուկեան: Ան ողջունելէ ետք ներկաները, շնորհակալութիւն յայտնեց ըն-

թացաւարտ Շրջանային Սկաուտական Խորհուրդին, որ անցեալ երկամեակին բացառիկ աշխատանք տարաւ սկաուտական շարքերու զարգացման համար՝ ղեկավարութեամբ Շրջանային ընդհանուր խմբապետ եղբ. Հրայր Պոյաճեանին, որուն քառամեայ աշխատանքը ի պաշտօնէ աւարտած ըլլալով՝ Շրջանային Վարչութիւնը զայն պատեց յատուկ գնահատագիրով, առ ի երախտագիտութիւն Հ.Մ.Ը.Մ.Ի շարքերուն իր ունեցած ներդրումին եւ անվերապահ նուիրումին, ինչպէս նաեւ իբրեւ Շրջանային ընդհանուր խմբապետ՝ իր կատարած ազգանպաստ գործունէութեան համար: Գնահատագիրը յանձնեց Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Սթիւ Արթինեան: Իսկ անոր խմբապետի տիպարը ներկայացուց իր սկաուտներէն, այժմ Հ.Մ.Ը.Մ.Ի Լոս Անճելըսի մասնաճիւղի խմբապետ եղբ. Անթընի Հինտոյեան, որ իր գնահատանքը յայտնեց եղբայր Պոյաճեանի սկաուտական լայնածաւալ գիտելիքներուն, դժուարութիւնները յաղթահարելու պատրաստակամութեան եւ արժանաւոր խմբապետի արժանիքներուն համար:

Եղբայր Պոյաճեանի պարգեւատրումը ջերմ ծափողոյններով ընկալուեցաւ

ներկայ սկաուտ պատասխանատուներուն կողմէ:

Այնուհետեւ տեղի ունեցաւ Շրջանային Սկաուտական Խորհուրդի պաշտօններու յանձնումը: Շրջանային խմբապետուհի նշանակուած քոյր Թալին Հինտոյեան սկաուտական իր երդումը վերանորոգելէ ետք ստացաւ պաշտօնը յատկանշող կապոյտ ուսնոցները՝ Շրջանային Վարչութեան ատենապետին ձեռամբ: Իր պաշտօնը ստանձնելէ ետք, քոյրը հրապարակաւ խոստացաւ ո՛չ միայն հաւատարիմ մնալ սկաուտական երդումին, այլ նաեւ՝ իբրեւ Շրջանային խմբապետուհի ջանալ լաւագոյն կերպով ծառայել Հ.Մ.Ը.Մ.Ի սկաուտներուն, կրթելու եւ բարձրացնելու համար անոնց գիտելիքները ազգային, քաղաքացիական եւ միութենական մարզերէն ներս:

Տպաւորիչ այս արարողութենէն ետք, քոյր Հինտոյեան նոր նշանակուած Շրջանային Սկաուտական Խորհուրդին անունով գեղեցիկ կանթեղ մը նուիրեց եղբ. Հրայր Պոյաճեանին, իբրեւ շնորհակալութիւն իր մատուցած օրինակելի ծառայութիւններուն: Կանթեղին վառած մոմը յոյսի ներշնչումն է, որուն վերեւ արձանագրուած են վաստակա-





ւոր Հ.Մ.Ը.Մ.ական եղբ. Սամուէլ Մկրտիչեանի հետեւեալ խօսքերը. «Այս տղոց կեանքը հեքիաթ չէ, վէպ չէ, որ կարդաս, ժամանց ընես ու յետոյ նետես մէկ կողմ, ինչպէս ժամանակավրէպ պատմութիւն, ինչպէս հին լաթի կտոր: Ո՛չ, այս տղոց կեանքը դաստիարակչական դպրոց մըն է, հաւատքի, գաղափարի մաքրամաքուր տաճար մըն է, որմէ պէտք է հաղորդուի ամէն Հ.Մ.Ը.Մ.ական»:

Ապա, այս հաւատքով քոյրը ներկայացուց նոր նշանակուած Շրջանային Սկաուտական Խորհուրդի հետեւեալ կազմը, որուն անդամները վերանորոգելով իրենց սկաուտ պատասխանատուի երդումը՝ ստացան իրենց պաշտօնը յատկանշող Շրջանային փոխ խմբապետ-խմբապետուհի ուսնոցները, Շրջանային Վարչութեան անդամներուն ձեռամբ. -

- Քոյր Անի Էքմէքճեան
- Եղբ. Լեւոն Գասպարեան
- Եղբ. Ներսէս Արշակեան
- Քոյր Ալին Կարապետեան
- Քոյր Նանօր Տէյիրմէնճեան
- Եղբ. Շահան Ստեփանեան

Երեկոյցն կը բացակայէին տղքթ. Արին Աբուլեան եւ հրէջ Մարթին Ռոսթամի:

Այնուհետեւ, քոյր Հինտոյեան օրւան գլխաւոր նպատակը ընդգծելով, «Անցեալով կերտենք մեր ապագան» կարգախօսով, վստահութիւն յայտնեց, որ նոր նշանակուած Շրջանային Սկաուտական Խորհուրդի կազմը սերտ գործակցութիւն կը ցուցաբերէ մասնաճիւղերուն հետ, որպէսզի միասնական ջանքերով աւելի հզօրանայ Հ.Մ.Ը.Մ.ի

ողնասիւնը նկատուող շրջանի սկաուտական բաժանմունքը:

Քոյրը նաեւ կոչ ըրաւ անցեալի եւ ներկայի սկաուտ ղեկավարներուն համախմբուելու Շրջանային Սկաուտական Խորհուրդին շուրջ, արձագանգելու անոնց դիմումներուն՝ օգնութեամբ եւ քաջալերանքով, որպէսզի միասնական ջանքերով աւելի հզօրանայ Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտական թեւը:

Այս հաւատքով, քոյրը յաջորդաբար ներկայացուց 1978էն մինչեւ օրս գործած Շրջանային խմբապետական կազմերն ու Սկաուտական Խորհուրդի անդամները եւ խնդրեց իւրաքանչիւրէն իր պատգամը արձանագրել այդ օրուան համար յատուկ պատրաստուած սկաուտական գաւազանին վրայ, որ պահ պիտի դրուի Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոնէն ներս, իբրեւ յիշեցում անցեալի եւ ներկայի սկաուտական աշխատանքներու շարունակութեան:

«Այս գաւազանը եւ անոր վրայ դրոշմուած պատգամները մեր յոյսի եւ հաւատքի վերանորոգման յիշեցումը պիտի ըլլան: Պիտի փորձենք մեր աշխատանքներու ընթացքին առողջ եւ դրական մթնոլորտ ստեղծել եւ հանգիստ ըլլալ իրարու հետ, որպէսզի յառաջդիմութիւն ստեղծուի, թիւի աճ արձանագրուի եւ որակաւոր աշխատանք կատարուի: Եւ վստահ եմ, որ մեր անցեալի սկաուտ ղեկավարները իրենց փորձառութեամբ պիտի հարստացնեն մեր գործունէութիւնը», ընդգծեց քոյր Հինտոյեան եւ ներկայացուց յառաջիկայ տարուան գործունէութեան հետեւեալ գլխաւոր նախաձեռնութիւնները. -

- ♦ Արի-արենոյններու սկաուտական

խաղերու մրցում:

♦ Քոյր մասնաճիւղերու բանակում՝ Հայաստանի մէջ:

♦ Ցամաքամասային դաստիարակչական բանակում Հ.Մ.Ը.Մ.ի հինգ շրջաններուն միջեւ՝ Արեւելեան եւ Արեւմտեան Միացեալ Նահանգներ, Գանատա, Աւստրալիա եւ Հարաւային Ամերիկա:

♦ Խմբապետներու վերաորակաւորման բանակում:

♦ Ապրիլեան Եղեռնի նուիրուած ոգեկոչման սկաուտական ծրագիր՝ Հ.Մ.Ը.Մ.ի բանակավայրին մէջ:

♦ Ազգային եւ կրօնական շքանշաններու դասընթացքներ:

♦ Ծնողական եւ սկաուտ խմբապետներու հանդիպումներ:

Պաշտօնական հանդիսութեան վերջին բաժինով, օրուան կրտսերագոյն խմբապետուհի քոյր Նաթալին Հինտոյեանի գլխաւորութեամբ, ներկաները վերանորոգեցին սկաուտական իրենց երդումը:

Այնուհետեւ տեղի ունեցաւ հիւրասիրութիւն, որուն ընթացքին ներկաները հաճելի գրոյցներ ունեցան շրջանի սկաուտական անցեալի եւ ներկայի աշխատանքներուն մասին:

Եզակի այս երեկոն վերջ գտաւ ուշ գիշեր: Ներկաները գոհունակութեամբ մեկնեցան տուն՝ իւրաքանչիւրը հետը տանելով «Անցեալով կերտենք մեր ապագան» կարգախօսը ներկայացնող յուշանուէր մը:





# Հ.Մ.Ը.Մ.-ՖՐԱՆՍԻ ՏԱՐԵԿԱՆ ՊԱՐԱՀԱՆԴԷՍԸ

## Սեւան Նազարեան ՓԱՐԻՉ

**Ն**որ տարին նոր յոյսերով, նորին հաւատալով, նոր եռանդով ըսկսելով սկիզբ մըն է: Հեւքի մէջ է Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի վարչութիւնը: Աշխատանք մը ունի, աւանդութեան վերածուած սովորութիւն մը ունի իրագործելիք: Հ.Մ.Ը.Մ.-ի ընտանիքը՝ Հ.Մ.Ը.Մ.-ին հաւատարիմ, Հ.Մ.Ը.Մ.-ով հարըստացող, միատեղ հաւաքելու եւ միասնաբար զուարճացնելու առիթը անգամ մը եւս լաւ ձեւով ընծայելու մտահոգութիւն:



Շաբաթ գիշեր է, 10 Յունուար 2009: Հաւաքուած են 380 հոգի, կը խօսին, կը խնդան եւ կը սպասեն Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի այս տարուան հրամցնելիք նորութիւնները:

Պարահանդէսի պատշաճ ու պերճ սրահը իրիկնային լոյսերով տակ աւելի գեղեցիկ է: Ճաշակաւոր են սեղանները եւ զանոնք զարդարող ծաղիկներն ու Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի կողմէ փոխանցուած տեղեկութիւնները (թղթիկներով վրայ տպագրուած):

Հիւրերը տեղաւորուելէ ետք, յանուն Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի վարչութեան ելոյթ ունեցաւ եւ բարի գալուստի խօսք ուղղեց ատենապետ եղբ. Անդրանիկ Պահարեան: Եղբայրը ներկայացուց Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի անցեալ տարուան իրագործումները եւ այս տարեշրջանի ծրագիրները: Ան անգամ մը եւս շնորհաւորեց Հ.Մ.Ը.Մ.-ը իր 90ամեակին առիթով, նշելով, որ թէեւ

քանի մը ամիս արդէն մեզ կը բաժնէ այդ տարեդարձէն, սակայն ան կը մարմնաւորէ միութեան ուժը:

Այնուհետեւ բեմ հրաւիրուեցաւ Հ.Մ.Ը.Մ.-ի Կեդրոնական Վարչութեան Եւրոպայի ներկայացուցիչ եղբ. Հրաչ Սիսեռեան: Եղբայրը Կեդրոնական Վարչութեան անունով ողջունեց Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի վարչութիւնը, որ 31 տարիէ ի վեր ոչ մէկ ճիգ կը խնայէ նման առիթներ ստեղծելով օգտակար հանդիսանալու միութեան կեանքի զարգացման:

Եղբայր Սիսեռեան մատնանշեց, որ Կեդրոնական Վարչութիւնը այլ ակնկալութիւն չունի, բացի նման ներկայութենէ մը, սրահը լեցուած, ինչ որ կը քաջալերէ Հ.Մ.Ը.Մ.-ը: Ու ան իր խօսքը եզրափակեց հաստատելով, որ Հ.Մ.Ը.Մ.-ը «Նահատակ ցեղի անմահներ» ու փաղանգը հասցուցած է «Ջահակիր երիտասարդներու», որոնք դարձած են հայապահպանման ջահակիրներ:

Կարկանդակի հատումը չուշացաւ, որմէ ետք գիրար յաջորդեցին երգն ու պարը:

Ու կար անակնկալը, հայկական տաւուլ-գուռնան, զոր կէս ժամուան ընթացքին ներկաները հրաւիրեց ազգագրական պարեղանակներ ունկնդրելու եւ անոնցմով ներշնչուելու:

Երեկոն ճոխացնելու համար հրաւիրուած խումբը՝ «Կոմիտաս» (Հալէպէն), իր երգիչով՝ Յովսէփի ընկերակցութեամբ, հայկական թէ օտար պարեղանակներու շարքը երկարեց մինչեւ ուշ գիշեր:

Ճիշդ է, որ խորագիրն ու առիթը պարահանդէս է, սակայն խորքը՝ հաւատքն է, իրարմով զօրացած, լիացած ըլլալը հաստատելու զգացումը: Ու շարունակելու նոր շունչը:







# Հ.Մ.Ը.Մ.Ի ՀԱՐԱԲԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԿԱՌԻՏԱԿԱՆ ՇՐՋԱՆԱՅԻՆ Գ. ԲԱՆԱԿՈՒՄԸ



## Թղթակից ԳՈՐՏՈՊԱ



Հ.Մ.Ը.Մ.Ի Հարաւային Ամերիկայի սկաուտական շրջանային երրորդ բանակումը տեղի ունեցաւ 7-17 Յունուար 2009ին, Գորտոպայի «Ալ Նոնօ» բանակավայրին մէջ, հովանաւորութեամբ Հ.Մ.Ը.Մ.Ի Հարաւային Ամերիկայի

Շրջանային Վարչութեան, կազմակերպութեամբ Շրջանային Սկաուտ. Խորհուրդին եւ հիւրընկալութեամբ Հ.Մ.Ը.Մ.Ի Գորտոպայի մասնաճիւղին: Բանակումին աշխատանքները գլխաւորելու համար, Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան արտօնութեամբ, Լիբանանէն յատկապէս հրաւիրուեցաւ քոյր Իրմա Ճէրէճեան, որ Յունիս 2008ին եւս այցելեց շրջան՝ Հարաւային Ամերիկայի խմբապետական համագումարի կազմակերպման առաքելութեամբ:

Բանակումին խմբապետական կազմը բաղկացաւ քոյր Իրմա Ճէրէճեանէ (ընդհանուր խմբապետուհի) եւ եղբայրներ Ակոսթին Անալեանէ (փոխ խմբապետ) եւ Լուքաս Արսլանեանէ (հերթապահ խմբապետ): Բանակումին ընթացքին գործադրուեցաւ հերթապահ խմբապետի եւ խումբի, ինչպէս նաեւ՝ մաքրութեան եւ ծառայութեան խմբապետի ու խմբակի դրութիւն: Վերոյիշեալ պարտականութիւնները կատարեցին խումբերու գլխաւոր խմբապետները: Գիշերային հերթապահները ճշդուեցան փոխ խմբապետներէն:

Հիւրընկալ Գորտոպայի մասնաճիւղի վարչութեան անդամները հերթաբար ներկայ եղան բանակումին: Անոնք ստանձնեցին մասնակիցներու կեցութեան դասաւորումը, սննդառութիւնը, բժշկութիւնը, ներքին փոխադրութիւնը եւ այլն: Հ.Մ.Ը.Մ.Ի Հարաւային Ամերիկայի Շրջանային Վարչութեան եւ Շրջանային Սկաուտ. Խորհուրդի անդամներ եւս ներկայ եղան բանակումի աշխատանքներուն, որոնց իրենց մասնակցութիւնը բերին 135 քոյր-եղբայրներ շրջանի սկաուտական երեք խմբաւորումներէն՝ «Արարատ» (Պուէնոս Այրէս), «Արագած» (Գորտոպա) եւ





«Կամք» (Ուրուկուէյ): Բանակավայր այցելեցին Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Գարլոս Սէֆէրեան, մասնաճիւղերու վարչութիւններու անդամներ, պատկան մարմիններու ներկայացուցիչներ, հիւրեր եւ ծնողներ:

Բանակումին պաշտօնական բացումը տեղի ունեցաւ Հինգշաբթի, 8 Յունուար 2009ի յետմիջօրէին, ներկայութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Հարաւային Ամերիկայի Շրջանային Վարչութեան, Շրջանային Սկաուտ. Խորհուրդի եւ Գորտոպայի մասնաճիւղի վարչական անդամներու:

Բարձրացան հինգ դրօշակներ՝ Արժանիքի, Ուրուկուէյի, Հայաստանի, համաշխարհային սկաուտութեան եւ Հ.Մ.Ը.Մ.ի: Բանակումին խմբապետական կազմը բանակումը բացուած յայտարարեց եւ ներկաներուն մաղթեց բարի կեցութիւն եւ յաջողութիւն:

Բանակումը ունէր իր կարգախօսը՝ «Մեր շրջանը միասին, մեր ուժը մայր հայրենիքին»: Պատրաստուած էր նաեւ բանակումին յատուկ երգը, նշանակը եւ թի-շորթը: Շրջանային Վարչութիւնը քոյր Իրմա Ճէրէճեանի ներկայութենէն օգտուելով ճշդեց նաեւ այլ կարգախօս



մը՝ «Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտը կը խօսի հայերէն, կը գործէ հայօրէն», որովհետեւ ան կը հաւատար որ բանակումի ընթացքին մասնակիցներուն մեծամասնութիւնը պիտի փորձէ արտայայտուիլ հայերէն:

Բանակումին 10 օրերուն ընթացքին գործադրուեցան սկաուտական երեք խմբաւորումներու կողմէ պատրաստուած յայտագիրներ, որոնք ընդգրկեցին խաղեր (սկաուտական եւ չարքաշութեան), արշաւներ (գիշերային, հետազօտական, լեռ մագլցելու), գետագնացութիւն, թանգարան այցելութիւն, սկաուտական կարգ մը գիտելիքներու ուսուցում, ինչպէս՝ փուռ շինել, խարոյկ պատրաստել, վրան լարել, կապեր եւ ձեռային այլ աշխատանքներ:

Ընդհանուր աշխատանքներու կողքին կատարուեցան նաեւ հետեւեալները՝

- Պատարագ եւ խաղողօրհնէք:
- Հայ Դատի մասին դասախօսութիւն:

-Զեկոյց՝ համա-Հ.Մ.Ը.Մ.ական Ե. համագումարի մասին (համագումարի մասնակիցներ եղբ. Ակուսթին Անալեանի եւ քոյր Մելինա Այվազեանի կողմէ):

Բանակումին 10 օրերու ընթացքին, առաւօտեան դրօշակի արարողութեան հետ փոխանցուեցան Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտական խոստումէն ու դաւանանքէն, գայլիկական խոստումէն, վոհմակի օրէնքներէն կէտեր: Բացատրուեցաւ անոնց իմաստը եւ յատուկ գրութիւններով գետեղուեցաւ բանակավայրի պատի թերթին վրայ: Գործեց նաեւ ռատիո-

ժամ, որ սփռեց հայերէն երգեր եւ խաղեր:

Բանակումի մասնակիցները ծանօթացան կարգապահական հրահանգներու եւ կարգ մը արարողութիւններու ճիշդ ձեւերուն, խարուկահանդէսի մը պատրաստութեան եղանակին եւ այլն: Այս առիթով տեղի ունեցաւ սկաուտական Ա. կարգի նիւթերու փոխանցում: 26 քոյր-եղբայրներ, փոխ խմբապետ եւ աւելի բարձր աստիճանով, ստացան Ա. կարգ:

Օրական, բանակումի խմբապետական կազմը ունեցաւ իր օրինաւոր հանդիպումները, որոնց ընթացքին լսեց խումբերու մտահոգութիւնները, առաջարկները եւ քննեց յաջորդ օրուան յայտագիրներու գործնականացման ձեւերը:

Բանակումին պաշտօնական փակումը տեղի ունեցաւ Զորեքշաբթի, 14 Յունուար 2009ի երեկոյեան, ներկայութեամբ Շրջանային Վարչութեան անդամներու, սկաուտական Ֆետերասիոնի ներկայացուցիչին, Գորտոպայի մասնաճիւղի վարչական անդամներու եւ հիւրերու: Այս առիթով արտասանուեցան խօսքեր եւ բարեմաղթութիւններ:

Աննպաստ օդին պատճառով նոյն օրը փակման կրակմարը տեղի չունեցաւ: Կրակմարը կատարուեցաւ յաջորդ գիշեր՝ 15 Յունուար 2009ին, որուն յաջորդող օրը խումբերը բանակավայրէն մեկնեցան երեք տարի ետք դարձեալ տեսնուելու խոստումով:







# Հ.Մ.Ը.Մ.Ի ԳԱՆԱՏԱՅԻ ՉՄԵՌՆԱՅԻՆ 38ՐԴ ՄԱՐԶԱԽԱՂԵՐԸ

## Մոսիկ Թօփուզեան ՄՈՆԹՐԵԱԼ

Հ.Մ.Ը.Մ.ի Գանատու «ձմեռնային 38րդ մարզախաղերը տեղի ունեցան 28-30 Նոյեբեր 2008ի շաբաթավերջին, Մոնթրեալի մէջ, նախաձեռնութեամբ՝ Շրջանային Վարչութեան եւ կազմակերպութեամբ Մոնթրեալի Հ.Մ.Ը.Մ.-«Կամք» մասնաճիւղի վարչութեան: Խաղերը նուիրուեցան Հ.Մ.Ը.Մ.ի 90ամեակին եւ Մոնթրեալի մասնաճիւղի հիմնադրութեան 50ամեակին:

Խաղերուն իրենց մասնակցութիւնը

բերին, Մոնթրեալի, Թորոնթոյի եւ Գէմպրիճի մասնաճիւղերու կողքին, Արեւելեան Միացեալ Նահանգներէն Շիքակոյի եւ Փրովիտընսի մասնաճիւղերը, իսկ Արեւմտեան շրջանէն Օրէնճ Գաունթի եւ «Մասիս» մասնաճիւղերը:



Երեք օրերու ընթացքին կիրարկուեցան պասքեթպոլ, սրահային ֆութպոլ, ֆլոր հաքի եւ վոլիպոլ: Շուրջ 300 մարզիկներ միութենական բարձր ոգիով մասնակցեցան խաղերուն: Հետաքրքրական մրցումներ կատարեցին յատկապէս փոքր դասակարգի ֆութպոլի խառն խումբերը (7-10 տարեկան), որոնք տիրացան համապատասխան բաժակներու եւ մետալներու: Հիմնականը, սակայն, Հ.Մ.Ը.Մ.ական բարձր ոգին եւ միջնորդուն էր, որ տիրեց դաշտերուն վրայ:

Այս առիթով տեղի ունեցաւ յաղթանակի պարահանդէս: Ներկայ էին բոլոր մարզիկները եւ մեծ թիւով քաջալերանդամներ: Յատկանշական եւ քաջալերա-





կան էր Գէմպրիճի եւ Շիքակոյի մարզիկներուն ընկերացող մեծ թիւով ծնողներու երեւոյթը:

Տեղի ունեցաւ նաեւ յատուկ ընդունելութիւն, որուն ներկայ գտնուեցան Ազգային Առաջնորդարանէն Սուրէն Արք. Գաթարոյեան, Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային եւ տեղական վարչութիւններու ներկայացուցիչներ, մասնակցող շրջաններու եւ մասնաճիւղերու պատասխանատուներ, Գանատայի դաշնակցային խորհրդարանի երեսփոխաններ եւ Մոնթրէալի քաղաքապետարանի խորհուրդի հայազգի անդամներ:

Մարգախաղերուն վերջին օրը, փակման հանդիսութիւնը սկսաւ սկաուտներու եւ մարզիկներու շքեղ տողանցքով: Խօսք առին Մոնթրէալի մասնաճիւղի ատենապետ եղբ. Ռիչրտ Մելքոնեան, Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Բաբգէն Կարապետեան եւ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Արմէն Կէտիկեան: Կատարուեցաւ բաժակներու եւ մետալներու բաշխում: Փակման խօսքով հանդէս եկաւ Սուրէն Արք. Գաթարոյեան, որ բարձր գնահատեց Հ.Մ.Ը.Մ.ի կատարած աշխատանքն ու առաքելութիւնը



Սփիւռքի եւ Հայաստանի մէջ: Ան շնորհաւորեց կազմակերպիչ մարմիններու կատարած ազգանուէր աշխատանքը եւ «Պահպանիչ»ով փակեց ձեռնարկը:

with the complements of

**Restaurant Al-Mayass**





# Հ.Մ.Ը.Մ.Ի ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՒԱՔՈՅԹԸ

## Թղթակից ԱԹԵՆՔ

Հ.Մ.Ը.Մ.ի Յունաստանի Շրջանային Վարչութեան տարեկան հաւաքոյթը տեղի ունեցաւ Զորեքշաբթի, 28 Յունւար 2009ի երեկոյեան, Գոքինիոյ «Զաւարեան» կեդրոնի «Սարաճեան-Զաքարեան» սրահին մէջ: Ներկայ էին Գոքինիոյ եւ Նէոս Գոգմոսի հոգեւոր հովիւները, Հ.Մ.Ը.Մ.ի Յունաստանի պատուոյ նախագահը, չքանչանակիր եղբայրներ, Հ.Մ.Ը.Մ.ի Աթէնքի եւ Գոքինիոյ մասնաճիւղերու վարչականներ, սկաուտ խմբապետներ, ծնողականներու անդամուհիներ, մարզիկներ, արիւարենոյճներ եւ Հ.Մ.Ը.Մ.ական բազմաթիւ հանդիսականներ:

Բարեմաղթութեան խօսքերով հաւաքոյթին բացումը կատարեց Հ.Մ.Ը.Մ.ի Յունաստանի Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Յարութիւն Մանուկեան: Ընդհանուր գիծերու մէջ ան անդրադարձաւ Հ.Մ.Ը.Մ.ի կազմութեան եւ ճիւղարձակման աշխատանքին Սփիւռքի մէջ, անոր յառաջացուցած սկաուտական եւ մարզական շարժումներուն, ինչպէս նաեւ կատարած դերին՝ հայապահպանման ու հայեցի դաստիարակութեան ի նպաստ: Ան իր խօսքը յունարէնով ալ կրկնեց: Խօսքին առընթեր, մեծ պաստառի վրայ,



մեղմ եղանակի մը ընկերակցութեամբ, ցուցադրուեցան Հ.Մ.Ը.Մ.ի Յունաստանի սկաուտական եւ մարզական շարժումներէն պատկերներ:

Շրջանային սկաուտ խմբապետուհի քոյր Գոհար Ալիանաքեան, իր բարեմաղթութիւնները յայտնելէ ետք, անցնող տարեշրջանի սկաուտական եւ արենուչական խումբերու ունեցած գործունէութեան մասին տեղեկութիւններ տուաւ: Բարեմաղթութեան արտայայտութիւններ ունեցան նաեւ Շրջանային Սկաուտ. Խորհուրդի կողմէ եղբ. Սերգօ Արապեան, Գոքինիոյ վարչութեան կողմէ եղբ. Յակոբ Խաչիկեան եւ Աթէնքի ու Գոքինիոյ ծնողականներուն կողմէ քոյրեր Մակի Խաչերեան եւ Անահիտ Մանկոյեան:



Խօսք տրուեցաւ Գոքինիոյ հոգեւոր հովիւ Վարազ Աւագ Քահանայ Հօր, որ իր պատգամին մէջ ի միջի այլոց ըսաւ. «Ինչպէս ամէն ծառ իր պտուղէն կը ճանչցուի, նոյնպէս ալ ամէն միութիւն կամ կազմակերպութիւն իր գործունէութեամբ կը ճանչցուի: Այն ծառը, որ պտուղ չի տար, կը կտրեն ու կ'այրեն, իսկ այն ծառը, որ պտուղ կու տայ, հոգածութեան կ'արժանացնեն, որպէսզի անիկա շարունակէ համեղ պտուղներ տալ, ու կը ջանան զայն միշտ պտղատու պահել: Հ.Մ.Ը.Մ.ը, իր հիմնադրութենէն մինչեւ այսօր, 90 եւ աւելի տա-



ընկերու իր հայանուէր ու հայրենանուէր գործունէութեամբ, եղաւ այդ պտղատու ծառը, որուն պտուղները ճաշակեց մեր ժողովուրդը: Հ.Մ.Ը.Մ.ը դարձաւ մեր ժողովուրդի հոգածութեան, սիրոյ եւ յարգանքի առարկան»: Շարունակելով, Քահանայ Հայրը հաստատեց. «Հ.Մ.Ը.Մ. հայրենիքին համար կեանքի կոչուեցաւ: Ծակատագիրը եւ կեանքի պայմանները, սակայն, գինք ապրեցուցին հայրենիքէն դուրս, օտար՝ բայց հիւրընկալ երկիրներու մէջ: Հայութիւնը եղաւ Հ.Մ.Ը.Մ.ի ծննդեան օրրանը եւ երբ պայմաններու բերումով հայութիւնը դարձաւ Սփիւռք՝ Հ.Մ.Ը.Մ. շարունակեց իր ծառայութիւնը սփիւռքեան պայմաններու մէջ, դառնալով յաջորդական սերունդներու մտքի ու հոգիի կրթարանը: Այդ սերունդներէն ծնունդ առին նոր սկառու խմբապետներ ու վարիչներ: Սփիւռքը դարձաւ հայուն երկրորդ հայրենիքը: Հ.Մ.Ը.Մ., սակայն, հակառակ իր սփիւռքեան տարագիր կեանքին, իր շարքերուն մաս կազմող բոլոր եղբայրներուն ու քոյրերուն ներշնչեց հաւատք եւ յոյս՝ օր մը անպայման հայրենիք վերադառնալու եւ Եռագոյնի ծածանումը տեսնելու ազատ ու անկախ հայրենիքի մէջ, Արարատի շուքին տակ»:



Քահանայ Հայրը իր խօսքը աւարտեց հաւաստիացնելով, որ սերունդները իրարու պիտի յաջորդեն, նորեր ալ իրենց կարգին պիտի գան միշտ վառ պահելու հիներէն իրենց փոխանցուած նուիրումի եւ գոհողութեան ջահը, հաւատաւոր ու պատասխանատու խմբապետներով ու վարչականներով շարունակելու համար Հ.Մ.Ը.Մ.ի նպատակասլաց առաքելութիւնը մեր ժողովուրդի կեանքէն ներս:

Այնուհետեւ, ան օրհնելով խաչակնքեց ու կտրեց գաթան:

Հաւաքոյթին վերջին բաժինով, նկատի ունենալով որ Հ.Մ.Ը.Մ.ի Աթէնքի պասքեթպոլի խումբը, մրցաշարքի իր խաղերու աւարտին, ախոյեան հանդիսացաւ եւ դասակարգ բարձրացաւ, տեղի ունեցաւ խումբի մարզիչ Սթեֆանոս Նիքոլայիտիսի, օգնական Վանկելիս Վոլոնաքիսի եւ խումբի խմբապետ եղբ. Սերգօ Եթիմեանի պարգեւատրումը, ինչպէս նաեւ՝ խաղացողներուն տուչութիւնը խաղերուն իրենց մասնակցութիւնը նշող գեղեցիկ յուշանուէրներով: Ապա, եղբայրատենապետին փակման խօսքով հաւաքոյթը խանդավառ մթնոլորտի մէջ հասաւ իր աւարտին:

# Jewelry Burs from FOX! All shapes, all sizes! Here are just a few!



2245 E. Colorado Blvd. 104-240  
Pasadena, CA 91107 USA  
arak@foxburs.com



Contact: ARA KHATCHIKIAN  
Tel: 626-791-4327  
Fax: 626-791-0866

*The Diamonds' Choice*



# ԵՂԲ. ԺԻՐԱՅՐ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

«Յ.Ս.Ը.Ս.ը ինժի համար բարոյականութեան մեծագոյն դպրոցն է: Ես յաճախած եմ բազմաթիւ դպրոցներ, բայց ամէնէն աւելի վրաս ազդած է Յ.Ս.Ը.Ս.ի դպրոցը: Ես, երեք եղբայրներս ու երեք տղաքս մեծցած են Յ.Ս.Ը.Ս.ի բարոյական վեհ սկզբունքներով: Յ.Ս.Ը.Ս.ի եզակի դրպրոցէն ներս գոյութիւն ունի եղբայրական սէր, զգացում եւ ուրիշներէ աւելի ծառայելու մրցակցութիւն»:

**Հ.Մ.Ը.Ս.**ական երեք քառորդ դարու կեանքի մը խտացումն է վերոյիշեալ վկայութիւնը, որուն հեղինակը՝ եղբ. ժիրայր Խաչատուրեան իր մահկանացուն կնքեց ամիսներ առաջ, 5 Դեկտեմբեր 2008ին:

Դժուար է հաշտուիլ եղբ. ժիրայրի կորուստին հետ: Հակառակ իր յառա-

ջացեալ տարիքին, ան համակ եռանդ ու խանդավառութիւն էր իր առօրեային մէջ, միշտ հետամուտ ապագայի նորանոր ծրագիրներու իրականացման:

Եղբ. ժիրայր Սարգիս Խաչատուրեան ծնած էր Ալեքսանտրէթ, 1921ին: 1924ին ան կը փոխադրուի Պէյրուի, ուր հայ գաղութի կազմաւորման սկզբնական շրջանին կը հիմնուի Հ.Մ.Ը.Ս.ի Պէյրուի մասնաճիւղը:

1931ին ան մաս կը կազմէ Պէյրուի մասնաճիւղի սկաուտական շարքերուն: Ապա, մասնաճիւղէն ներս կը կիրարկէ զանազան մարզախաղեր՝ ֆութպոլ, պասքեթպոլ, թենիս եւ հեծիկ:

1952ին, եղբ. ժիրայր մաս կը կազմէ մասնաճիւղին վարչութեան, փոխ ատենապետի պաշտօնով: 1959, 1960 եւ 1964 տարիներուն ան կը վարէ վարչութեան ատենապետի պաշտօնը: Հաւատաւոր Հ.Մ.Ը.Ս.ական մը ըլլալու կողքին, եղբ. ժիրայր կ'ըլլայ նաեւ նուիրեալ Դաշնակցական մը: Ան մաս կը կազմէ



Հ.Յ.Դ. «Զաւարեան» Ուսանողական Միութեան շարքերուն, իսկ աւելի ուշ՝ «Քրիստափոր» եւ «Աղբալեան» կոմիտէութիւններուն:

Ասպարէզով ճարտարագէտ, եղբ.

## ՎԿԱՅՈՒԹԻՒՆ ՄԸ

# ՏԵՍԻԼՔԻ ՄԱՐԴԸ

**1968** ին, Յ.Ս.Ը.Ս.ի հիմնադրութեան յիսնամեակին առիթով, երբ սեղանի վրայ կը դրուէր ֆութպոլի սեփական դաշտ մը ունենալու հարցը, մօտէն ծանչցայ ժիրայր Խաչատուրեան տեսիլքի մարդը, որ առաջինը եղաւ գտնելու ֆութպոլի դաշտի յարմար հողաշերտ մը, Անթիլիասի շրջանին մէջ, շատ նպաստաւոր պայմաններով: Դժբախտաբար ծրագիրը չիրականացաւ: Այնուհետեւ, կարգ մը հողաշերտերու պրպտումին մէջ եղբ. ժիրայր կարելորդ դեր ունեցաւ, ճարտարագէտի իր մասնագիտութեամբ ներկայացուած թեկնածութիւններուն իր քաջալերական մօտեցումով, մինչեւ իսկ իր սեփական հողաշերտերէն բաժին մըն ալ այդ նպատակին նուիրաբերելով: Սակայն աւա՛ղ: Շարունակութիւնը եղաւ այն, որ Յ.Ս.Ը.Ս.ի ֆութպոլի սեփական դաշտ մը ունենալու պարագան մնաց անիրականանալի երազ:

Այսպէս էր եղբ. ժիրայր Խաչատուրեան տիպար Յ.Ս.Ը.Ս.ականը: «Մարգիկ»ին տրուած հարցազրոյցի մը մէջ ան կը հաստատէր. «Յ.Ս.Ը.Ս.ականութիւնը ոգի է: Այդ ոգին երբ մէջդ մտնէ՝ ցկեանս կը մնայ: Ահա թէ ո՛ր կը կայանայ Յ.Ս.Ը.Ս.ի ուժին եւ յարատեւութեան գաղտնիքը: Յ.Ս.Ը.Ս.ական ըլլալը սակայն չի բաւեր: Հարկ է Յ.Ս.Ը.Ս.ի ոգին եւ շունչը փոխանցել նաեւ մեր զաւակներուն»:

Գործնական մարդու իր առաջադրութիւններով, ան ծանօթ է Անթիլիասի «Աղբալեան- Յ.Ս.Ը.Ս.» մարզամրջակութային համալիրին մէջ «Համագգայինի ժիրայր եւ Յովինէ Խաչատուրեան Կեդրոն»ին նուիրաբերումով եւ տակաւին ազգանուէր այլ ծրագիրներու իր մասնակցութեամբ:

Բ. Թ.



Խաչատուրեան 1964ին նիւթական կարեւոր ներդրում կ'ունենայ Պէյրուի աւուստրիական շինութեան աշխատանքներուն:

1969ին, գանձապահի պաշտօնով ան մաս կը կազմէ Մերձաւոր Արեւելքի Շրջանային Վարչութեան: Նոյն տարին ան կը գլխաւորէ Լիբանանի ախոյեան Հ.Մ.Ը.Մ-ի ֆուլթայլի խումբին պատուիրակութիւնը՝ Թեհրանի մէջ կազմակերպուած Ասիոյ ախոյեան խումբերու ախոյեանութեան մրցաշարքին:

1985ին, եղբ. Ժիրայր մաս կը կազմէ Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի Շրջանային Վարչութեան, իսկ 15 Յունուար 2000ին Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան կողմէ ան կը պարգեւատրուի «Արժանեաց» շքանշանով:

Եղբ. Ժիրայր Խաչատուրեան, հաւատարիմ Հ.Մ.Ը.Մ-ականի իր կոչումին, անսակարկ կերպով կը ծառայէ նաեւ լիբանանեան իր հայրենիքին: 1961էն մինչեւ 1998, 37 տարի շարունակ, ան մաս



կը կազմէ Պէյրուի Քաղաքապետական Խորհուրդին:

1968ին եւ 1998ին ան կ'արժանանայ լիբանանեան մայրիներու «Ասպետ»ի եւ «Սպայ»ի զոյգ շքանշաններուն, Արաբական Երկիրներու Քաղաքներու Կազ-

մակերպութեան հիմնադրութեան եւ Պէյրուի բարգաւաճման ծրագիրներուն իր բերած մեծ ներդրումին առ ի գնահատանք:

1970ին, Այն Սատէի շինարարական իր համալիրի շրջանին մէջ, ան Ազգային Առաջնորդարանին կը նուիրէ 16.000 քառակուսի մետր տարածութեամբ հողաշերտ մը՝ Ազգային կեդրոնական վարժարանի մը շինութեան, Հ.Մ.Ը.Մ-ի եւ Համազգայինի աւուստրիական կառուցման եւ Հ.Մ.Ը.Մ-ին ու վարժարանին կողմէ օգտագործուելիք խաղափայրի մը շինութեան համար: Հետագային, իր բարերարութեամբ, Անթիլիասի «Աղբայեան-Հ.Մ.Ը.Մ.» մարզամշակութային

կեդրոնին մէջ կը կառուցուի Համազգայինի գեղարուեստի դպրոցներուն տրամադրուած յարկ մը, որ կը կոչուի «Ժիրայր եւ Յովինէ Խաչատուրեան Կեդրոն»:

*'Made from one single slice of natural Australian opal'*

# Classique®

## OPAL DIAL WATCH

*Sarkis Der Bedrossian*

*Sams Watchmaker Jeweller Pty. Ltd.  
123 Clarence Street  
Sydney 2000  
Australia*

Phone: +61 2 9290 2199  
fax: +61 2 9262 1630  
Website: [www.classiquewatches.com](http://www.classiquewatches.com)  
Email: [Info@classiquewatches.com](mailto:Info@classiquewatches.com)





ԲԱՐԵԿԻՐԹ ԸԼԼԱՆՔ

# ԲԱՐԵԿՐԹՈՒԹԻՒՆԸ ԴՊՐՈՑԻՆ ՄԷՋ

Քաղեց՝ Սալբի Լատոյեան  
ՊԵՅՐՈՒԹ



Կրօցը փոքրիկ աշխարհ մըն է. հոն կը սորվինք կեանքին օրէնքները եւ կը հանդիպինք տարբեր նկարագիրով աշակերտներու:

Դպրոցն է որ կը կազմէ աշակերտին նկարագիրը. հոն կը սորվինք զանազանել լաւը գէշէն, չարը բարիէն եւ անկիրթը կիրթէն: Պէտք է դպրոց երթանք մաքուր գոգնոցով եւ կօշիկով, սանտրուած մազերով եւ կոկիկ պայուսակով:

Պէտք է միշտ յիշել, որ դպրոց կ'երթանք սորվելու եւ զարգանալու համար, ուրեմն մեր դասերը սորված եւ պարտականութիւնները կատարած պէտք է ըլլանք:

Դասարանը պէտք է պահենք մաքուր, պէտք չէ գծենք եւ ծակծկենք գրասեղանները: Դասի պահուն պէտք է լուռ մտիկ ընենք բացատրութիւնները, չխանգարենք դասարանը, մասնակցինք ուսուցիչին հարցումներուն, իսկ եթէ դաս մը չհասկնանք՝ կիրթ ձեւով բացատրութիւն խնդրենք ուսուցիչէն:

Ուսուցիչը եկած է մեզի օգնելու եւ ցուցմունք տալու, պէտք է յարգենք զայն:

Չմոռնանք, որ դպրոց կ'երթանք սորվելու եւ զարգանալու եւ ոչ թէ ժամանցի համար:

ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻՆ

## ԿՈՂՄՆԱԳՈՅՑ

Կողմնացոյցը թեթեւ գործիք մըն է, որ ուղղութիւն ցոյց կու տայ: Ան կազմուած է մագնիսական ասեղով մը, որուն կարմիր ծայրը միշտ ցոյց կու տայ հիւսիսը, իսկ միւս կողմը՝ հարաւը:



Կողմնացոյցը չինացիներու ստեղծագործութիւնն է: Ժամանակին ան կը գործածուէր

նաւարկութեան համար, այսօր անոր գործածութիւնը ընդհանրացած եւ զարգացած է:

Կողմնացոյցը ընդհանրապէս զետեղուած կ'ըլլայ աստիճանական գծաքաշի մը վրայ, որ թափանցիկ կ'ըլլայ, որպէսզի քարտէսը երեւի: Ան կ'ունենայ շարժուն խարիսխ մը, որ կը պահէ ուղղութիւնը: Անոր շրջանակը բաժնուած կ'ըլլայ 0էն 360 աստիճանի եւ կը դառնայ ժամացոյցի ուղղութեամբ: Հիւսիսը կը գտնուի 0 կամ 360 աստիճանին վրայ, արեւելքը՝ 90 աստիճանի վրայ, հարաւը՝ 180 աստիճանի վրայ, իսկ արեւմուտքը՝ 270 աստիճանի վրայ: Կողմնացոյցը ճիշդ գործածելու համար պէտք է ուղիղ եւ անշարժ պահել, նաեւ պէտք է հեռու պահել ելեկտրական հոսանքէ, որպէսզի ուղղութիւնը չշեղի:








# ՆԵՐԿԻ՛



## ՄԱՆԿԱԿԱՆ ԵՐԳԵՐ

## ԴՊՐՈՑԱԿԱՆ ՔԱՅԼԵՐԳ



Մենք մանուկներ հայոց ազգի,  
Ծագող լոյսի հետ առտուան,  
Միշտ կենսուրախ եւ ժպտագին,  
Կ'երթանք դպրոց շարան-շարան:

Մեր սակառն է թէւ աղքատ,  
Բայց մերն է կեանքն ու ապագան,  
Եւ գիրքերու գանձ է առատ,  
Մեր թելերուն տակ տիրական:

Լոյսի օճախ հայրենի տուն,  
Դպրոցէն ներս մեր սիրական,  
Կը հնչէ միշտ մեր սուրբ լեզուն,  
Երգի մը պէս յաւերժական:



## ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻՆ



# ԳՈՐՏԸ

**Գ**որտերը փոքր կենդանիներ են, որոնք իրենց ժամանակին մեծ մասը կ'անցնեն ջուրին մէջ: Գորտեր կարելի է գտնել լիճերուն եւ գետերուն մէջ: Կան գորտի տեսակներ, որոնք ծառերու վրայ կ'ապրին: Անոնք իրենց ոտքերուն տակը գտնուող փակցնելիքի նման յատուկ հեղուկներու միջոցով կրնան ծառ մագլցիլ:

Գորտերուն մորթը ջուր կը ծծէ եւ այդ ջուրը իրենց մարմնին մէջ կ'անցնի, ճիշդ այդ պատճառով ալ գորտերը պէտք չեն ունենար ջուր խմելու, որպէսզի ապրին: Գորտերուն ոտքերը շատ զօրաւոր են եւ այդ պատճառով է որ անոնք կրնան երկար տարածութեան վրայ ցատկիլ:

Ամէնէն մեծ գորտը 30 սմ. է եւ Ափրիկէի մէջ կը գտնուի, իսկ ամէնէն պզտիկը 1.5 սմ. է:

Գորտերը յատուկ են, որովհետեւ անոնք կը շնչեն իրենց թոքերուն եւ մորթին ճամբով: Անոնք կ'ուտեն միջատներ եւ պզտիկ սարդեր:

Գորտին թշնամիները ձուկերը, կրիաները եւ նոյնիսկ մարդիկն են: Գորտը որպէսզի ինքզինք պաշտպանէ թշնամիէն կ'որդեգրէ ինքնապաշտպանութեան գանազան ձեւեր:

Արու գորտերը շատ գեղեցիկ ձայն կ'ունենան. անոնք կ'երգեն, որպէսզի էգ գորտերը իրենց մօտ կանչեն եւ ամուսնանան:

Նորածին գորտերը սկզբնական շրջանին ձուկի կը նմանին: Երկու շաբաթէն մէկ ամիս կը տեւէ, որպէսզի անոնք մեծնան եւ գորտի նմանին:

Գորտերը ընդհանրապէս կ'ապրին 4էն 15 տարի:

## ՀԱՆԵԼՈՒԿ



Ո՞վ է, ի՞նչ է:  
Երկու ճամբորդ են,  
մէկ ոտքով կ'երթան,  
Ո՛չ դադար կ'առնեն  
եւ ոչ ալ կը քնանան:

(Պատասխանը՝ յաջորդիւ: Նախորդ հանելուկին պատասխանն էր Կրիայ):







Էլի Հուլիշեան

## «ՄԱՐԶԻԿ»Ի «ՔԱԶԱԼԵՐ ԱՆԴԱՄ»ՆԵՐ

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան որոշումով հաստատուած է «Մարզիկ»ի «Քաջալեր անդամ»ներու դրուծին: Թերթին «Քաջալեր անդամ» կը նկատուին բոլոր անոնք, որոնք տարեկան 200 եւ աւելի ամերիկեան տոլար կը նուիրեն անոր բարգաւաճման ծրագիրներուն:

«Քաջալեր անդամ»ներու անունները կը հրատարակուին թերթին յաջորդական 12 թիւերուն մէջ:

«Մարզիկ»ի «Քաջալեր անդամ»ներ են.-

ԱՐԵՎԵԼԵԱՆ ՄԻԱՅԵԱԼ ՆԱՅԱՆՔՆԵՐԷՆ Ազատուիի Դանիելեան, Վահրամ Դանիելեան, Լեւոն եւ Թագուիի Փալեաններ, Պետո եւ Սիրան Տեր Պետրոսեաններ, Չարեհ Գարակիւլեան, Յակոբ Թոքաթլեան, Վազգէն Լախոյեան եւ Կարպիս Պարսումեան:

ԳԱՆԱՏԱՅԷՆ Վաղարշ Էիրամճեան, Արթո Մարգարեան, Տիանա Հաճեթեան, Հրանդ Տետեան, Բաբգէն Կարապետեան, Երուանդ Շահիսեան եւ Կարապետ Ն. Թովճեան:

ՅՈՐԴԱՆԱՆԷՆ ճորճ Տաքտեան:

## ՄԿԱՌԻՏԱԿԱՆ ՎԿԱՅԵԱԿ ԵՒ ԱՐԱՐԱՏԵԱՆ...

Շարունակուած 5րդ էջէն

Ի՞նչ է թիրախը:

- Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը ի տես օրուան պահանջներուն, ինքզինք պատասխանատու կը զգայ կարճ ժամանակամիջոցի մէջ ուստում մը կատարելու սկստական աշխատանքներու բնագաւառէն ներս: Մենք վստահ ենք, որ այս ծրագիրներու իրագործումով եւ առաւելագոյն թիւով խմբապետ-խմբապետուհիներու մէկտեղումով նոր թափ ու




եռանդ պիտի ներարկուի մեր շրջաններուն, աշխատանքները պիտի բարելաւուին եւ մանաւա՛նդ բաւարարած պիտի ըլլանք շրջաններու պահանջը՝ սկստական բաժանմունքներուն խմբապետներ պատրաստելով:

Այս նախաձեռնութիւնները սկիզբ պէտք է նկատել եւ յառաջիկայ քառամեակներուն յաջորդական ու հետեւողական ծրագիրներով աշխատանքը պէտք է շարունակել:



### ՀՈՐԻՉՈՆԱԿԱՆ



- 2008 թվականի թեմիսմէն:
- Սեւ ազուաւ - Տարածքի միաւոր:
- Դրկից տառեր - Աշխատանքով ստացուած արդիւնք:
- Արեւելեան երաժշտութեան տիտուր եղանակ մը - Ցուցական ածական:
- Յապաւուած՝ արաբական պետութիւն - Հոլովակերտ մասնիկ - Նիհար:
- Շողոմանք - Աստուածային:
- Սարսափահար - Մուրացանի վիպակներէն՝ «... ազուաւր»:
- Հարագատ - Մատթէոս Չարիֆեանի երկերէն «Կեանքի եւ ... երգեր»:
- Չայնանիչ - Չարութիւն - Գրաբար՝ անոնց:
- Բեմական ներկայացում - Իգական օտար անուն - Խղճա՛:
- Ստացական ածական - Դերենիկ Դեմիրճեանի ծննդավայրը - Յոգնակերտ մասնիկ:
- Խոպան - Իգական օտար անուն:
- Իրերայաջորդ գիրքեր - Կանգնի՛ր - Միայն - Աղբիւր:
- Արաբական ոստան - Ծովագոյն - Քրիստոնէական Չանից Ամառնային Կեդրոն:
- Ճաշակել - Կոկորդիլոս - Համադասական շաղկապ:
- Մեռելներու պահեստանոց՝ հիւանդանոցի մէջ (հակ.) - Այսինքն - Սալվատոր Տալիի տիկինը:
- Քի Մուսի նախորդը - Յօտ:
- Որոտալ - Արգելական:
- Ժապաւէն - Գահակալ:
- Երաժշտական գործիք մը - Արական անուն - Սրուակ:

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	
1															
2															
3															
4															
5															
6															
7															
8															
9															
10															
11															
12															
13															
14															
15															
16															
17															
18															
19															
20															


### ՈՒՂՂԱՀԱՅԵԱՑ

- 2008 թի աշխարհի լաւագոյն ֆուլթպոլիստը՝ ըստ «ՅԻՅԱ»-ի:
- Տնկելի ոստ - Թայլանտի նախկին անունը - Ողբ - Կրկնուած բաղաձայններ:
- Մէկ հատիկ - Կրակի գոյն:
- Հայաստանի ֆուլթպոլի ֆետերասիոնի նախագահը:
- Նոյեմբի հարսերէն - Քրտական կուսակցութիւն - Նախանձիլ - Լեցուն:
- Դրկից տառեր - Գրաբար՝ ո՞ւր - Վերցնել:
- Բարբարոս - Դեղ մանրելու քար:
- Եւրոպական ինքնաշարժի մականիչ - Ժամանում - Իգական անուն - Սկահակ:
- Երուսաղէմի մէջ բլուր մը - Չայնանիչ - Հայ նահատակ բանաստեղծ:
- Մեծ մայր - Խախտիլ - Միքայէլ Յովհաննիսեանի գրչանունը:
- Իգական անուն - Ձիւնախառն քամի - Չայնակից գիրքեր - Բուծ:
- Հարէմ - Հաւի կտնառք - Բախուկ:
- Եղանակ - Պատուական քար մը - Արական օտար անուն:
- 301 - Առաջնորդ - Ոլոր:
- Մնդիկի ծծմբուկ - Մանրոջիլ:

### ԹԻԲ 174 ԽԱՉԲԱՌԻՆ ԼՈՒԾՈՒՄԸ

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15		
1		S	Ե	Ն	Վ	Ը	Ր	Ն	Ա	Կ	Է	Թ	Յ			
2		Է	Ր	Ո	Ս			Ե	Ա	Լ	Թ	Ա		Ա		
3		Թ	Ն		S	O	Ն		Մ	Ա	Կ	Ա	Ն			
4		Վ	Ա	Հ	Ա	Ն		Խ	Ա	Ն						
5		Ա	Մ	Ի	Կ		Հ	Ա	Մ	Ա	Ս					
6	Ն	Պ	Ա	S		Ո		Ն	Ա	Ր	S	Ի				
7	Ո		Ն	Պ	Ա	Ս	S	Լ	Ա		Ս					
8	Վ	Ե	Ր	Ե	Լ	Ք		Ս	Ե	Ն	Ե	Կ	Ա	Լ		
9	Ա	Ա		Ք		Ի	Ր	Ա	Ջ	Ե	Կ		Ճ	Ի	Մ	
10	Ք	Ն	Ա	Հ	Ա	S		S	Ի	Լ	Լ	Ա	Մ	Ա		
11	S		Շ	Ա				Ր	Ա		Թ	Ա	Ն	Ա	Ք	
12	Ի	Մ	Ա	Մ				Ա		Ա	Ն	Ս	Ա		Ս	
13	Ո	Ռ	Ն					Պ	Ի	Ն	Գ		Ն	Ի	Մ	
14	Ք	Ա		Փ				Շ	Կ	Ա	Հ		Շ	Ո		
15	Ո	Ի	S	Ա	Ն			Ա	Յ	S		Լ	Ո	Լ	Ո	Ջ
16	Վ		Ի	Ր	Ի	Ս		Ո	Ր	Ք		Վ	Ո	Ի	Լ	
17	Ի	Ս	Կ	Ա	Կ	Ա	Ն		Մ		Ջ	Ո	Ի	Կ	Ի	
18	Ջ	Ի	Ն		Ի			Ա	Մ	Ո	Լ		Յ	Յ		
19		S	Ի	S	Ա	Ն		Ա	Ի	Ա	Գ		Կ	Ա	Գ	
20	Ա	Ղ	Կ	Ր				Ա	Ս	Ղ		Կ	Մ	Ի	Ն	Ք





Հ.Մ.Ը.Մ. ԲԱՐՉՐԱՑԻՐ  
ԲԱՐՉՐԱՑՈՒՐ